# 2009

## ՏԱՐԵԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ
## ANNUAL REPORT

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society

| | | |
|---|---|---|
| ՀԿԽԸ նախագահի ուղերձը | 1 | Message of ARCS President |
| ՀԿԽԸ կողմից 2009թ. իրականացված ծրագրեր | 2 | Programs implemented by ARCS in 2009 |
| Համառոտ տեղեկատվություն | 4 | In Brief |
| Անցած ուղին | 5 | History |
| Սոցիալական բաժին | 6 | Social Department |
| «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն | 7 | "GRATSIA" International Rehabilitation Center |
| Առողջապահական բաժին | 8 | Health Department |
| Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժին | 10 | Disaster Management and Population Movement Department |
| Առաջին օգնության բաժին | 14 | First Aid Department |
| Որոնման բաժին | 16 | Tracing Department |
| Լրատվության և լուսաբանման բաժին | 17 | Information and Dissemination Department |
| Երիտասարդական բաժին | 19 | Youth Department |
| Միջազգային կապերի բաժին | 21 | International Affairs Department |
| Գերմանական Կարմիր խաչի գործունեությունը Հայաստանում | 22 | Activities of German Red Cross in Armenia |
| Ռեսուրսների հայթայթում | 23 | Resourse Mobilization |
| ՀԿԽԸ ֆինանսական գործունեություն | 24 | Financial Activities of ARCS |

**Սիրելի բարեկամներ,**

2009 թվականը Հայկական Կարմիր խաչի ընկերության և ողջ միջազգային շարժման համար նշանավորվեց Կարմիր խաչի ու Կարմիր մահիկի միջազգային շարժման մտահղացման 150 ամյակով, Կարմիր խաչի ու Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի հիմնադրման 90 ամյակով և Ժնևյան կոնվենցիաների 60 ամյակով:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ ճանաչված լինելով Կարմիր խաչի և Կարմիր մահիկի շարժման կողմից և հանդիսանալով Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային Ֆեդերացիայի լիիրավ անդամ, նույնպես անմասն չմնաց համաշխարհային այդ արշավից և, տարվա կտրվածքով, իրականացրեց բազմաբնույթ միջոցառումներ: Միջոցառումները նպատակ էին հետապնդում ներկայացնել Ազգային ընկերության առջև ծառացած հիմնական մարդասիրական մարտահրավերները:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով՝ շատ մարդկանց համար ակնհայտորեն ծանր ժամանակներ են, սակայն դրանք էլ ավելի ծանր են նրանց համար, ովքեր մինչ այդ էլ գտնվում էին ծանր պայմաններում: Մենք կոլեկտիվ պատասխանատվություն ենք կրում մեր աշխարհն ավելի լավ վայր դարձնելու համար, և մեզանից յուրաքանչյուրն ունի անհատական ներուժ՝ «քայլ կատարելու» մյուսներին օգնելու համար՝ իր ժամանակը տրամադրելով ծեր հարևանին կամ սնունդ և ապաստարան առաջարկելով պատերազմի հետևանքով տեղահանված մի ընտանիքի:

Հետադարձ հայացք նետելով 2009 թվականին, կարող եմ վստահաբար ասել, որ ընկերության աշխատակիցները և կամավորները արել են ամեն ինչ, որպեսզի հնարավորինս թեթևացնեն մարդկային տառապանքները և պահպանեն մարդկային արժանապատվությունը՝ աշխատելով հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում, հասարակության գրեթե բոլոր շերտերի հետ:

Տարեկան զեկույցի միջոցով ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել նվիրատուներին, Հայկական Կարմիր խաչի ընկերության անդամներին, կամավորներին, աշխատակազմին և բոլոր նրանց, ովքեր ուրիշի ցավը համարելով իրենցը, օգնության ձեռք են մեկնում կարիքավորներին:

**ՄԵՆՔ ՕԳՆՈՒՄ ԵՆՔ ՁԵՐ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ**

Մխիթար Մնացականյան
ՀԿԽԸ նախագահ



**Dear friends,**

2009 was a jubilee year for the Armenian Red Cross Society and the International Movement, celebrating 150 years of the Red Cross/Red Crescent International Movement, 90 years of the foundation of the International Federation of Red Cross and Red Crescent Societies and 60 years of the Geneva Conventions.

Recognized by the Red Cross and Red Crescent Movement and being member of International Federation of Red Cross and Red Crescent Societies, the Armenian Red Cross Society also did not stay apart to that global campaign. Various events were organized to raise awareness of the current humanitarian concerns of the National Society.

Though the current global crisis presents difficult times for everyone, the situation is especially escalated for those who were previously living in poor conditions. We carry a collective responsibility for making our world a better place and each of us carries the potential to "make a step" to help others spending time with an elderly neighbor or offering food and asylum to a family displaced by war.

Looking back at 2009, I can confidently say that staff and volunteers of the National Society have done everything in their power to alleviate sufferings and ensure human dignity through working in numerous areas of social life and social spheres.

Through the annual report, I would like to express deep gratitude to our donors, Armenian Red Cross Society members, volunteers, staff and all those who have adopted the pain of others as their own and have stretched a helping hand to those in need.

**WE HELP WITH YOUR HELP**

Mkhitar Mnatsakanyan
ARCS President

# 2009թ. Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացված/իրականացվող ծրագրեր<br>Programs implemented by ARCS in 2009

| Իրականացնող բաժինը / Ծրագրի անվանումը<br>Department/Program | Նպատակը<br>Goal | Նվիրատուն<br>Donor | Սկիզբը Beginning | Ավարտը End | Իրականացման վայրը<br>Location | Շահառուները Beneficiaries | Բյուջեն<br>Budget | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սոցիալական բաժին/Social Department** | | | | | | | | |
| «Հայաստանում նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհերի սոցիալ-հոգեբանական և բժշկական խնամք»:<br>"Psychosocial and medical support to the victims of National Socialism in Armenia" | Հայաստանում բնակվող նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհերի սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավում<br>Improve psychosocial condition of victims of National Socialism living in Armenia. | Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրթեմբերգի երկրամասային միավորումը և Գերմանական Հիշողություն, պատասխանատվություն, ապագա» հիմնադրամը:<br>The Baden Wurttemberg Provincial Branch of the German Red Cross and "Memory, Resposibility, Future" German Foundation | 01.07.2008 | 30.06.2011 | Երևան,Վանաձոր և Տավուշի մարզի 13 համայնքներ<br>Yerevan,Vanadzor and 13 communities of Tavush region | Հայաստանում բնակվող նախկին նացիոնալ- սոցիալիստների զոհեր<br>Victims of National Socialism living in Armenia. | 33.875 | Եվրո<br>EUR |
| Ձմեռային սննդի ծանրոցներ<br>Winter food parcels | Թեթևացնել միայնակ ծերերի ծայրահեղ վատ վիճակը<br>To relief extremely bad conditions of lone elderly people | Կխ և ԿՄ ՄՖ, Ճապոնական Կարմիր Խաչ<br>IFRC, Japaness Red Cross | 12/15/2009 | 1/15/2010 | Գյումրի, Արմավիր, Գավառ, Սևան<br>Gyumri, Armavir, Gavar, Sevan | Սոցալապես վատ վիճակում գտնվող միայնակ ծերեր<br>Extremely vulnerable lone elderly people | 4.700 | Շվ.ֆր<br>CHF |
| **Առողջապահական բաժին/Health Department** | | | | | | | | |
| «Կանգնեցնել բազմադեղորայքակայուն տուբերկուլոզը»<br>Stop Multi Drug Resistant Tuberculosis | Նվազեցնել հիվանդների խոցելիությունը ԲԴԿ ՏԲ-ի նկատմամբ<br>To decrease the vulnerability of patients towards MDR TB | Էլայ Լիլի և կոմպանիա<br>Eli Lilly and Company | 01.04.2009 | 30.11.2011 | Երևան<br>Yerevan | Բազմադեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդներ, որոնք գտնվում են բուժման պահպանողական փուլում<br>Multi drug-resistant tuberculosis patients in the continuation phase of treatment | 149.726 | ԱՄՆ<br>USD |
| «ՀՀ-ում Տուբերկուլոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում»<br>Strengthening National TB Control Program in Armenia | Բարելավել հիվանդների բուժման հետևողականությունը<br>To improve patients' treatment adherence | Գլոբալ հիմնադրամ<br>The Global Fund | 17.09.2009 | 30.07.2010 | Հայաստանի Հանրապետություն<br>Republic of Armenia | Ռեգուլյար տուբերկուլոզով հիվանդներ, որոնք գտնվում են բուժման պահպանողական փուլում<br>Regular tuberculosis patients in the continuation phase of treatment | 51.271.500 | ՀՀ դրամ<br>AMD |
| «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում»<br>HIV Prevention in Armenia | Նվազեցնել խոցելիությունը ՄԻԱՎ-ի նկատմամբ և նրա ազդեցությունը<br>To reduce the vulnerability to HIV and its impact | Ամերիկյան Կարմիր խաչ, Կխ և ԿՄ ՄՖ-ի օժանդակությամբ<br>A merican Red Cross, through the IFRC | 01.07.2008 | 30.06.2009 | Հայաստանի Հանրապետություն<br>Republic of Armenia | ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, ՀՀ երիտասարդություն<br>People living with HIV, RA youth | 25.213 | Շվֆր<br>CHF |
| «Վնասի նվազեցում»<br>Harm Reduction | Նվազեցնել ներերակային թմրամիջոցներ օգտագործողների խոցելիությունը ՄԻԱՎ-ի, հեպատիտի նկատմամբ<br>To decrease the vulnerability of intravenous drug users towards HIV, hepatitis | Բաց հասարակություն ինստիտուտ օժանդակության հիմնադրամ<br>Open Society Institute Assistance Foundation | 03.11.2008 | 30.06.2009 | Լոռու մարզ, Վանաձոր<br>Lori region, Vanadzor city | Ներերակային թմրամիջոցներ օգտագործողներ<br>Intravenous drug users | 4.725 | ԱՄՆ<br>USD |
| **Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժին/Disaster Management and Population Movement Department** | | | | | | | | |
| Աղետների ռիսկի նվազեցում<br>Disaster Risk Reduction | Նվազեցնել ՀՀ Տավուշի մարզի 10 ռիսկային համայնքների խոցելիությունը աղետների նկատմամբ և բարձրացնել նրանց պատրաստվածության աստիճանը<br>To reduce the vulnerability of 10 risky communities of Tavush Region of RA towards disasters and raise the level of their preparedness | Նորվեգական Կխ, Կխ և ԿՄ ՄՖ<br>Norwegian Red Cross, IFRC | 01.09.2009 | 31.13.2009 | ՀՀ Տավուշի մարզ<br>Tavush region of RA | ՀՀ Տավուշի մարզի 10 ռիսկային գյուղական համայնքներ<br>10 rural communities of Tavush region of RA | 34000 | Շվ.ֆր.<br>CHF |
| Աղետների ռիսկի նվազեցում<br>Disaster Risk Reduction | Նվազեցնել ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի 11 քաղաքային և գյուղական համայնքների խոցելիությունը աղետների նկատմամբ և բարձրացնել նրանց պատրաստվածության աստիճանը<br>To reduce the vulnerability of 11 urban and rural communities of Lori and Tavush Regions of RA towards disasters and raise the level of their preparedness | ԳՏՀ «Աղետներին նախապատրաստում Հարավային Կովկասում»<br>GTZ "Disaster Preparedness in South Caucasus" | 22.12.2009 | 30.05.2010 | ՀՀ Լոռու և Տավուշի մարզեր Lori and Tavush regions of RA | ՀՀ բնակչություն, մասնավորապես դպրոցահասակ երեխաներ և ՀԿԽԸ աշխատակիցներ և կամավորներ<br>RA population, particularly schoolchildren and ARCS staff and volunteers | 8.590.000 | ՀՀ դրամ<br>AMD |
| Խոցելիության և կարողությունների գնահատում ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում<br>Vulnerability and Capacity Assessment in RA Lori and Tavush regions of RA | Սահմանել և գնահատել հիմնական խոցելիությունները՝ կապված աղետի ռիսկերի և Լոռու և Տավուշի մարզերում աղետների կառավարման համար առկա տեղական կարողությունների հետ<br>To define and assess main vulnerabilities connected to disaster risk and local capacities of Lori and Tavush regions in disaster management | GTZ «Աղետներին նախապատրաստում Հարավային Կովկասում»<br>GTZ "Disaster Preparedness in South Caucasus" | 01.11.2008 | 31.01.2009 | ՀՀ Լոռու և Տավուշի մարզեր<br>Lori and Tavush regions of RA | ՀՀ Լոռու մարզի 71 և Տավուշի մարզի 40 քաղաքային և գյուղական համայնքներ<br>71 urban and rural communities in Lori region of RA and 40 urban and rural communities of Tavush region of RA | 7.568.000 | ՀՀ դրամ<br>AMD |
| Անվտանգ դպրոցներ հետերկրաշարժյա գոտում<br>Safe Schools in the Post-Earthquake Area | Բարձրացնել և հզորացնել Գյումրի, Ստեփանավան, Վանաձոր և Սպիտակ քաղաքների 85 դպրոցների աշակերտների և ուսուցիչների աղետներին դիմակայելու գիտելիքներն ու պատրաստվածության աստիճանը<br>To raise and strengthen the level of knowledge of disaster preparedness among schoolchildren and teachers of 85 schools of Gyumri, Stepanavan, Vanadzor and Spitak | Գերմանական Կարմիր խաչ<br>German Red Cross | 01.12.2008 | 31.05.2009 | Շիրակի և Լոռու մարզեր<br>Shirak and Lori regions | Գյումրի, Ստեփանավան, Վանաձոր և Սպիտակ քաղաքների 85 դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ<br>Schoolchildren and teachers from 85 schools of Gyumri, Stepanavan, Vanadzor and Spitak cities | 28810 | Եվրո<br>EUR |
| Անվտանգ դպրոցներ հետերկրաշարժյա գոտում<br>Safe Schools in the Post-Earthquake Area | Գյումրի, Ստեփանավան, Վանաձոր և Սպիտակ քաղաքների 85 դպրոցների անապահով աշակերտներին գրենական պիտույքների, սպորտային պարագաների, հագուստի և այլ ապրանքների տրամադրում:<br>To provide needy pupils of 85 schools of Gyumri, Stepanavan, Vanadzor and Spitak cities with stationary, sport equipment, clothes and etc. | Վորլդ Վիժն Հայաստան<br>World Vision Armenia | 01.04.2009 | 30.04.2009 | Շիրակի և Լոռու մարզեր<br>Shirak and Lori regions | Գյումրի, Ստեփանավան, Վանաձոր և Սպիտակ քաղաքների 85 դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ<br>Schoolchildren and teachers from 85 schools of Gyumri, Stepanavan, Vanadzor and Spitak cities | 15300 | ԱՄՆ<br>USD |
| Աջակցություն ապաստան հայցողներին<br>Assistance to Asylum Seekers | ՀՀ-ում ապաստան հայցողներին մարդասիրական, բժշկական օգնության, սոցիալ-հոգեբանական աջակցության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում: Վաղ ազդարարման համակարգի մշակում:<br>Provision of humanitarian, medical, psychosocial assistance and legal counseling to asylum seekers in RA | ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակ<br>UNHCRArmenia | 01.01.2009 | 31.12.2009 | ՀՀ, Երևան<br>Yerevan, RA | Ապաստան հայցողներ<br>Asylum seekers | 13.185.700 | ՀՀ դրամ<br>AMD |
| Երիտասարդությունն ընդդեմ թրագիքինգի<br>Youth against Trafficking | Բարձրացնել Հայաստանի բնակչության՝ հատկապես երիտասարդների իրազեկությունը մարդկային թրաֆիքինգի վերաբերյալ, զինել նրանց անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով՝ միավորելով նրանց ներուժը թրաֆիքինգի դեմ պայքարում:<br>To raise awareness on human trafficking of the population of Armenia particularly the youth as well as to provide them with corresponding knowledge and skills to unite their efforts in fighting against trafficking. | ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ<br>UNDP Armenia | 8.10.2009 | 11.09.2009 | ՀՀ Արմավիր, Արարատ, Կոտայք, Շիրակ, Լոռի, Արագածոտն, Գեղարքունիք, Երևան Armavir, Ararat, Kotayq, Shirak, Lori, Aragatsotn, Gegharquniq and Yerevan | ՀՀ Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Գեղարքունիքի մարզերի և Երևանի բնակչություն Population of Armavir, Ararat, Kotayq, Shirak, Lori, Aragatsotn, Gegharquniq regions and Yerevan | 5.290.000 | ՀՀ դրամ<br>AMD |

| Իրականացնող բաժինը / Ծրագրի անվանումը<br>Department/Program | Նպատակը<br>Goal | Նվիրատուն<br>Donor | Սկիզբը Beginning | Ավարտը End | Իրականացման վայրը<br>Location | Շահառուները Beneficiaries | Բյուջեն<br>Budget | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Առաջին օգնության բաժին/ First Aid Department** | | | | | | | | |
| «Առաջին օգնություն դասընթացներ ՀՀ հեռավոր համայնքների բնակիչների համար»<br>"First Aid courses for population of RA remote communities" | Նվազեցնել հեռավոր համայնքների բնակչության խոցելիությունը տարբեր աղետների և կենցաղային պատահարների նկատմամբ, նվազագույնի հասցնել վնասվածքների և մահացության թիվը նրանց մոտ:<br>To reduce vulnerability of population of remote communities to disasters and domestic incidents, to reduce the number of injuries and mortality. | Գերմանական Կարմիր խաչ<br>German Red Cross | 01.03.2009թ. | 28.02.2010 | Լոռու, Վայոց Ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի և Շիրակի մարզեր<br>Lori, Vayoc Dzor, Syuniq, Gegharquniq and Shirak regions | Հեռավոր համայնքների բնակիչներ<br>Population of remote communities | 8.997.194 | ՀՀ դրամ<br>AMD |
| «Առաջին օգնության դասընթացներ ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների համար»<br>"First Aid courses for population of RA border communities" | Նվազեցնել սահմանամերձ համայնքների բնակչության  խոցելիությունը տարբեր աղետների և կենցաղային պատահարների նկատմամբ, նվազագույնի հասցնել վնասվածքների և մահացության թիվը նրանց մոտ:<br>To reduce vulnerability of population of border communities to different disasters and domestic incidents, to reduce the number of injuries and mortality. | ԿԽՄԿ<br>ICRC | 01.01.2009թ. | 31.12.2009 | Տավուշի,Գեղարքունիքի և Սյունիքի մարզեր:<br>Tavush, Gegharquniq and Syuniq regions | Սահմանամերձ համայնքների բնակիչներ:<br>Population of border communities | 1.373.298 | ՀՀ դրամ<br>AMD |
| «Առաջին օգնության գործունեության համակարգում ԱՕՈՒՄԿ միջոցով»<br>Coordination of FA by the FATMC | Նվազեցնել աղետների նկատմամբ բնակիչության խոցելիությունը՝ ԱՕ գիտելիքների և հմտությունների ուսուցանումով:<br>To reduce vulnerability of population to disasters, through spreading FA skills and knowledge | ՇՍՀ<br>SFS | 01.07.2009թ. | 30.06.2010 | Վայոց Ձորի, Լոռու, Սյունիքի, Արագածոտնի, Տավուշի,Գեղարքունիքի մարզեր:<br>Vayoc Dzor, Lori, Syuniq, Aragatsotn, Tavush and Gegharquniq regions | Համայնքների բնակիչներ<br>Population of communities | 2.868.920 | ՀՀ դրամ<br>AMD |
| «Առաջին օգնության տարրեր» դասընթաց 10-12 տարեկան երեխաների համար<br>"Basic FA" training for children aged 10-12 | Նվազեցնել Գեղարքունիքի մարզի ութ համայնքների 10-12 տարեկան երեխաների խոցելիությունը տարբեր աղետների և կենցաղային պատահարների նկատմամբ՝ ԱՕ գիտելիքների և հմտությունների ուսուցանումով:<br>To reduce vulnerability of 10-12 aged children of eight communities of Gegharquniq region to different disasters and domestic incidents through spreading FA skills and knowledge | ՎՎ<br>WV | 16.11.2009թ. | 07.05.2010 | Գեղարքունիքի մարզ<br>Gegharquniq regions | Համայնքի 10-12 տարեկան երեխաներ<br>10-12 aged children of border community | 2.560.000 | ՀՀ դրամ<br>AMD |
| **Որոնման բաժին/Tracing Depertment** | | | | | | | | |
| "Որոնում" ծառայություն<br>Tracing Department | Կազմալուծված ընտանիքների վերամիավորում, պատերազմների, հակամարտությունների և աղետների հետևանքով անհայտ կորածների որոնում:<br>Tracing of the missing and restoration of family links lost through wars, conflicts and disasters. | ԿԽՄԿ<br>ICRC | 01.01.2009 | 31.12.2009 | ԿԽ/ԿՄ անդամ. պետ<br>RC/RC member states | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 2.217.500 | ՀՀ դրամ<br>AMD |
| Մանրամասն Տվյալների Հավաքագրում<br>Detailed Data Collection | Ղարաբաղյան Հակամարտության հետևանքով անհայտ կորած անձանց վերաբերյալ մինչմահու տվյալների հավաքագրում<br>Revealing fates of persons missing after the conflict on Nagorno-Karabakh | ԿԽՄԿ<br>ICRC | 01.11.2009 | 30.06.2009 | ՀՀ տարածք<br>RA territory | Անհայտ կորածների ընտանիքի անդամներ<br>Family members of the missing persons | 4.750.417 | ՀՀ դրամ<br>AMD |
| **Երիտասարդական բաժին/Youth Department** | | | | | | | | |
| Սոցիալ-հոգեբանական աջակցություն փախստականներին<br>"Psychosocial support to Refugees" | Աջակցել փախստականների սոցիալական խնդիրներին և նպաստել նրանց ինտեգրմանը հասարակության մեջ:<br>To support the social problems of refugees and contribute to their integration into society | ԿԽ և ԿՄ ՄՖ<br>IFRC | 01.01.2009 | 31.12.2009 | ՀՀ տարածք<br>RA Regions | ԵԿԽ կամավորներ, փախստականներ<br>RCY Volunteers, Refugees | 52400 | Շվ.ֆր.<br>CHF |
| "Կարմիր խաչը քեզ համար, իսկ դու կարմիր խաչի համար"<br>"Red Cross for You and You for the Red Cross" | Զարգացնել ԱԸ հաղորդակցման կարողությունները<br>To develop the NS communication skills of the NS. | ԿԽ և ԿՄ ՄՖ<br>IFRC | 01.05.2008 | 01.04.2009 | ՀՀ տարածք<br>RA Regions | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 40130 | Շվ.ֆր.<br>CHF |
| Ֆրանսիական խնամակալություն<br>French Trustee's support to orphans | Ֆինանսական աջակցություն ծնողազուրկ երեխաներին<br>Financial support to orphans | <<Հայ ԿԽ օգնության կոմիտեի>> Լիոնի մասնաճյուղ<br>Lyon Branch of the Committee for support to the Armenian Red Cross | 01.01.2009 | 31.12.2009 | ՀՀ տարածք<br>RA Regions | ՀԿԽԸ 3 ՄՄ-ների ծնողազուրկ երեխաներ<br>Orphans in 3 RBs of ARCS | 10 920 | Եվրո<br>EUR |
| Կողմնորոշվելու ժամանակն է<br>Time for choice | Հանրային լայնածավալ միջոցառումների միջոցով բարձրացնել իրազեկությունը ՀՀ ազգաբնակչության՝ հատկապես երիտասարդության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող խնդիրների մասին<br>To raise awareness of RA population especially youth about HIV/AIDS related issues through large public events. | Գլոբալ Հիմնադրամ<br>Global Fund | 01.10.2009 | 31.09.2010 | ՀՀ տարածք<br>RA Regions | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 29.486 | Եվրո<br>EUR |
| ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում<br>HIV prevenation in Aremenia | Բարձրացնել իրազեկությունը ՀՀ ազգաբնակչության՝ հատկապես երիտասարդության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող խնդիրների մասին<br>To raise awareness of RA population  especially youth  about HIV/AIDS related issues | ԱԿԽ<br>ARC | 01.01.2009 | 01.07.2009 | ՀՀ տարածք<br>RA Regions | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 31 650 | Շվ.ֆր.<br>CHF |
| Եվրոպական Կամավորական Ծառայություն<br>European Voluntary Service (EVS) | Փորձի և մշակութային արժեքների փոխանակում երիտասարդների միջև<br>Experience and cultural exchange among young people | Եվրոմիություն<br>European Union | 01.01.2009 | 31.12.2009 | ՀՀ տարածք<br>RA Regions | 14 հայ և օտարերկրյա կամավորներ<br>14 Armenian and foreign volunteers | 71 20 | Եվրո<br>EUR |
| **Լրատվության և լուսաբանման բաժին/Information and Dissemination Department** | | | | | | | | |
| "Լուսաբանում"<br>"Dissemination" | ԿԽ շարժման և հիմնարար սկզբունքների, ՀԿԽԸ պատմության և գործունեության, ՄՄԻ լուսաբանում, ԿԽ/ԿՄ խորհրդանշանի պաշտպանություն<br>Dissemination of RC Movement and Fundamental Principles, ARCS history, activities and IHL, protection of RC Emblem | ԿԽՄԿ<br>ICRC | 01.01.2009 | 31.12.2009 | ՀՀ տարածք<br>RA territory | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 8.645.386 | ՀՀ դրամ<br>AMD |
| **Ֆինանսական ծառայություն/Financial Service** | | | | | | | | |
| Ռեսուրսների մոբիլիզացում<br>Resource mobilization | Զարգացնել ՀԿԽԸ կարողությունները՝ խոցելի խմբերին բարելավված ծառայություններ ցուցաբերելու համար<br>Develop ARCS capacities for better social delivery to the vulnerable groups | ԿԽ և ԿՄ ՄՖ<br>IFRC | 01.01.2009 | 31.12.2009 | ՀՀ տարածք<br>RA Regions | ՀԿԽԸ աշխատակիցներ և կամավորներ<br>ARCS staff and volunteers | 26600 | Շվ.ֆր.<br>CHF |

## Համառոտ տեղեկատվություն

### ՀԿԽԸ Առաքելությունը

Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ: Նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբանակչության խոցելիության պատճառ դառնալ: Ցուցաբերել անրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը հիմնադրվել է 1920թ-ի մարտի 19-ին Սպանդարատ Կամսարականի կողմից

Armenian Red Cross Society was founded on 19 March, 1920 by Spandarat Kamsarakan

### Նպատակը

Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասայական, սեռային, հոգևոր դասակարգային պատկանելությունից և քաղաքական հայացքներից:

| Նախագահ | Գլխավոր քարտուղար | Պատվավոր նախագահ |
|---|---|---|
| Մխիթար Մնացականյան | Աննա Եղիազարյան | Աշոտ Սարգսյան |

### Պատվավոր անդամներ

| | |
|---|---|
| Ռիտա Փարսադանյան | ՀԿԽԸ նախագահ 1975-1991 թթ |
| Պիեռ Միշո | Ֆրանսիական Կարմիր խաչ |
| Գերհարդ Մայեր | Գերմանական կարմիր խաչ |
| Դերենիկ Դումանյան | ՀՀ Առողջապահության ազգային ինստիտուտի տնօրեն |
| Գագիկ Մարտիրոսյան | ՀՀ Պետնախարար |
| Գաֆուր Կուրման | Ռուսական Կարմիր խաչ, փրկարար |
| Հարություն Եսոյան | ՀԿԽԸ փրկարար |
| Վալերի Վարդանյան | ՀԿԽԸ փրկարար |

### Ընդհանուր տեղեկություններ

| | |
|---|---|
| Մարզային մասնաճյուղ | 11 |
| Տարածքային մասնաճյուղ | 2 |
| Համայնքային մասնաճյուղ | 52 |
| «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն | 1 |
| Բարեգործական ճաշարան | 3 |
| Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոն | 1 |
| Հյուրանոցային համալիր | 1 |
| Տարածաշրջանային բազա | 1 |
| Ուսումնական կենտրոն | 1 |

## In brief

### ARCS Mission

To reduce vulnerability of the population through mobilization of the power of humanity. To get prepared to cope with situations, which may cause vulnerability among the population. To provide essential support by assisting people made vulnerable by harsh socioeconomic conditions.

### Goal

The overall goal of the Society is to prevent and alleviate human sufferings without making any discrimination as to nationality, race, sexual, religious beliefs, class and political opinions.

| President | Secretary General | Honorary President |
|---|---|---|
| Mkhitar Mnatsakanyan | Anna Yeghiazaryan | Ashot Sargsyan |

### Honorary Members

| | |
|---|---|
| Rita Parsadanyan: | ARCS President throughout 1975-1991 |
| Pier Michaud: | French Red Cross |
| Gerhard Mayer: | German Red Cross, volunteer |
| Derenik Dumanyan: | Director , National Health Institute, RA |
| Gagik Martirosyan: | State Minister, RA |
| Gaphur Kurmayev: | Russian Red Cross, rescuer |
| Harutyoun Yesoyan: | ARCS rescuer |
| Valeri Vardanyan: | ARCS rescuer |

### Overview

| | |
|---|---|
| Regional Branches: | 11 |
| Territorial Branches : | 2 |
| Community Branches: | 52 |
| International Post-Trauma rehabilitation Centre: | 1 |
| Charity kitchens: | 3 |
| First Aid training methodological Centre: | 1 |
| Hotel Compound: | 1 |
| Regional Warehouse Base: | 1 |
| Training Centre: | 1 |

## Անցած ուղին

**Հայկական Կարմիր խաչի ընկերության հիմնադրման և զարգացման հիմնական տարեթվերը**

**1920** ՀՀ Պառլամենտը վավերացրեց Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) Կանոնադրությունը

**1921** ՀԿԽԸ-ն, ժամանակավոր դադարից հետո, վերսկսեց աշխատանքը

**1922** Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի որոշմամբ շարունակվեց ՀԿԽԸ գործունեությունը և վերահաստատվեց Կանոնադրությունը

**1925** ՀԿԽԸ-ն դարձավ ԽՍՀՄ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ և ԿՄ) ընկերությունների դաշինքի անդամ

**1992** ՀԿԽԸ 14-րդ համագումարում ՀԿԽԸ-ն հռչակվեց ՀՀ-ում գործող Կարմիր խաչի միակ Ազգային ընկերությունը (ԱԸ)

**1992** ՀՀ-ում բացվեց Հետվնասվածքային վերականգնողական միջազգային կենտրոնը

**1993** ՀՀ միացավ 1949 թ-ի Ժնևի Կոնվենցիաներին և 1977 թ-ի լրացուցիչ արձանագրություններին

**1993** ՀԿԽԸ-ն ճանաչվեց ՀՀ Նախագահի հրամանագրով

**1995** ՀԿԽԸ-ն ճանաչվեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) կողմից որպես 166-րդ ԱԸ

**1995** ՀԿԽԸ-ն դարձավ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽ/ԿՄ ՄՖ) անդամ

**1997** Սոլֆերինո քաղաքի Կարմիր խաչի թանգարանում տեղադրվեց ՀԿԽԸ հուշաքարը

**1997** Սևիլիյում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 12-րդ Համագումարում ՀԿԽԸ երկու տարի ժամկետով ընտրվեց «ԿԽ/ԿՄ ՄՖ 2010 Ռազմավարության» նախապատրաստման հանձնաժողովի անդամ

**2001** Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 13-րդ Համագումարում ՀԿԽԸ-ն երկու տարի ժամկետով ընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ

**2002** ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի խորհրդանշանների գործածության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը

**2003** Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 14-րդ Համագումարում ՀԿԽԸ-ն վերընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ

**2005** Սեուլում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ Համագումարում ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց Երիտասարդական հանձնաժողովի անդամ

**2005** Ավստրիայում կայացած Եվրոպական համագործակցության համաժողովի ժամանակ ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց որպես կոորդինացման կոմիտեի անդամ

**2006** Աթենքում կայացած հանդիպման ժամանակ ՀԿԽԸ Աղետների կառավարման բաժինն ընդգրկվեց Եվրոպական ԿԽ և ԿՄ ԱԸ-ների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցում

## History

**Review of the Armenian Red Cross Society foundation and development**

**1920** The Parliament of the RA ratified the Statutes of the Armenian Red Cross Society (ARCS)

**1921** Activities of ARCS were resumed after temporary cancellation

**1922** ARCS activities were resumed and its Statutes was re-approved by the Government of Armenian Soviet Socialist Republic

**1925** ARCS became a member of the Alliance of Red Cross and Red Crescent (RC/RC) Societies of USSR

**1992** During the 14th session of General Assembly ARCS was declared as the only National Society (NS) in RA

**1992** International Post-Trauma Rehabilitation Centre was established in Armenia

**1993** RA became signatory to the Geneva Conventions of 1949 and its Additional Conventions of 1977

**1993** ARCS was recognized by the RA President's statement

**1995** ARCS was recognized by the International Committee of the Red Cross (ICRC) as 166th NS

**1995** ARCS was admitted to the International Federation of Red Cross and Red Crescent Societies (IFRC) as its full member

**1997** ARCS memorial plate was placed in the Red Cross Museum of Solferino.

**1997** ARCS was elected as a member of 2010 Strategic Planning Commission by the 12th session of IFRC General Assembly in Seville

**2001** ARCS was elected as member of Organizational Development Commission by the 13th session of IFRC General Assembly

**2002** The National Assembly of the RA adopted law on the use and protection of Red Cross and Red Crescent emblems

**2003** ARCS was re-elected as a member of Organizational Development Commission by the 14th session of IFRC General Assembly in Geneva

**2005** ARCS Youth Department was elected as a member of Youth Commission during the session of IFRC General Assembly in Seoul

**2005** ARCS Youth Department was elected as a member of Coordination Committee by European Coordination Committee in Austria

**2006** ARCS Disaster Management and Population Movement Department was included as a member in European RC/RC NSs Network for Psychological Support during the meeting in Athens

# ՍՈՑԻԱԼ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ
## Սոցիալական բաժին

# HEALTH AND CARE ACTIVITIES
## Social Department











### Տարվա նվաճում
Տարվա նվաճումներն են՝ բաժնի կամավորների թվի աճը և ծրագրի՝ հիմնականում կամավորների միջոցով իրականացումը:

### Գործունեության ոլորտները
Բնակչության սոցիալական վիճակի ուսումնասիրում, սոցիալական ծառայությունների մատուցում, սննդամթերքի, դեղամիջոցների, հիգիենիկ պարագաների, հագուստի բաշխում, հոգեբանական և խորհրդատվական աջակցություն:

### Տարվա ծրագրային գործունեություն
**Ծրագիր «Հայաստանում նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհերի սոցիալ-հոգեբանական և բժշկական խնամք»**

Ծրագիրը ֆինանսավորում են Գերմանական Կարմիր Խաչի (ԳԿԽ) Բադեն-Վյուտեմբերգի երկրամասային միավորումը և Գերմանական «Հիշողություն, պատասխանատվություն, ապագա» հիմնադրամը: Ծրագրում ընդգրկված են 96 շահառուներ Երևանից, Վանաձորից և Տավուշի մարզի 13 բնակավայրերից:

Ծրագրի շրջանակներում շահառուներին ամսեկան մեկ անգամ բաժանվում է սնունդ, բժշկի նշանակմամբ դեղամիջոցներ, ինչպես նաև, պարբերաբար, հիգիենիկ պարագաներ և հագուստ: Ծրագրի անձնակազմի կողմից շահառուները ստանում են հոգեբանական աջակցություն, ինչպես նաև բժշկական խնամք:

Ծրագրի շրջանակներում հոկտեմբերի 5-ին Բերդ քաղաքում ՀԿԽԸ ներկայացուցիչները, ԳԿԽ Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային միավորման ներկայացուցիչ Միխաիլ Ույբլը և քահանա Կարլ - Հայնց Շայդեն մասնակցեցին Սարգիս Բադալյանի 100-ամյակին նվիրված հանդիսությանը:

### Լրացուցիչ գործունեություն
2009 թ-ին շուրջ 2700 կարիքավորների բաշխվել են «Focus on Children Now, Inc.» և «Միջազգային օգնություն և զարգացում» (IRD) ընկերության հայկական մասնաճյուղի կողմից տրամադրված հիգիենիկ պարագաներ, օգտագործված հագուստ, անվասայլակներ:

Ճապոնական Կարմիր Խաչի ֆինանսավորմամբ և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի աջակցությամբ Գյումրիում, Արմավիրում, Գավառում և Սևանում 160 միայնակ տարեցներ դեկտեմբեր ամսին ստացել են 9.5 կգ տարողությամբ ծանրոցներ:

### Բաժնի կողմից տարվա ընթացքում սպասարկված շահառուների թիվը
Տարվա ընթացքում բաժնի կողմից և ծրագրերի միջոցով ամենատարբեր սոցիալական ծառայություններ են մատուցվել ավելի քան 3500 շահառուների:

### Achievement of the year
Achievements of the department are increasing number of volunteers and that the program is mainly carried out by the volunteers.

### Activity area
Investigation of social welfare of the population, promotion of social services, distribution of food, medicaments, hygienic supplies and clothes, psychological support, advisory and counseling services.

### Programs/projects
**"Psychosocial and Medical support to the victims of National Socialism in Armenia"**

The program is financed by the Baden Wurttemberg Provincial Branch of the German Red Cross and "Memory, Responsibility, Future" German Foundation. 96 beneficiaries from Yerevan, Vanadzor and 13 communities of Tavush region are involved in the program.

Within the frameworks of the program beneficiaries are monthly distributed parcels of food, medicaments prescribed by doctors, as well as, periodically they are provided with hygiene supplies and clothes. The beneficiaries are provided with psychological support and nurse care by the program staff.

Within the frameworks of the program ARCS representatives, Michael Uibel and priest Karl-Heinz Scheide participated in 100th birthday party of Sargis Badalyan on October 5.

### Additional information in brief
In 2009 hygienic supplies, second-hand clothes and wheelchairs provided by "Focus on Children Now, Inc" and "International Relief and Development" (IRD) Armenian branch were distributed among 2700 beneficiaries.

With the funding of Japanese Red Cross and support of International Federation of Red Cross and Red Crescent Societies , 9.5 kg weight food parcels were distributed among 160 lone elderly people in Gyumri, Armavir, Gavar and Sevan.

### Number of beneficiaries reached during the year
More than 3500 beneficiaries received different social services during the year.

# ՍՈՑԻԱԼ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

## «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն

# HEALTH AND CARE ACTIVITIES

## "GRATSIA" International Rehabilitation Center

**Գործունեության ոլորտները**

Կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժումն է, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնումը, հիվանդների մասնագիտական ուսուցումը, սոցիալ-հոգեբանական վերականգնումը, սանատոր-կուրորտային բուժումը:

**Տարվա ծրագրային գործունեություն**

2009թ. կենտրոնը շարունակել է իր համագործակցությունը ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնարարականատարի հայաստանյան ներկայացուցչության և ԱՄՆ-ի դեսպանատան հետ: Համագործակցության նպատակն է օգնել Իրաքի հայ փախստականներին` տրամադրելով Կենտրոնի հնարավորությունները:

Հայկական Կարմիր խաչի ընկերության «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնի գործունեությունը մարդասիրության լավագույն դրսևորումներից է:

Ողնուղեղի և ողնաշարի վնասվածքով յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատում է առանձին բժիշկ, բուժքույր, վերականգնող թերապևտ, հոգեբան, սպորտային մարզիչ:

Կենտրոնն ունի ընդլայնված ստացիոնար և ամբուլատոր բժշկակական ծառայություններ`ախտորոշում,ջրաբուժություն, ջրային մերսում,ցեխաբուժություն /տորֆաբուժություն, կինեզո-թերապիա,ֆիզիոթերապևտիկ բուժում, բուժական և դասական մերսում, էլեկտրաթերապիա, ինհալացիոն բուժումներ, ասեղնա-բուժություն, սպորտային համալիրի, սթրեսոլոգի կաբինետի, «ՍԿԷՆԱՌ» բաժանմունք:

Իր գործունեության ընթացքում Կենտրոնում արդեն բուժվել և իրենց առողջությունն են վերականգնել մոտ 9000 հիվանդներ Հայաստանից, ԱՊՀ-ից, Եվրոպայից և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներից:Կենտրոնում տարեկան կտրվածքով բուժում են ստանում 600-700 հաշմանդամ, 35 վետերան, 10-15 փախստական, մոտ 535 սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչներ:

Կատարվում են նաև դիսպանսեր տնային այցելություններ հաշվառման վերցրած ողնաշարի և ողնուղեղի վնասվածքով հաշմանդամ հիվանդներին` ցուցաբերելով բժշկական օգնություն և հետազոտում: Կենտրոնի «Փարոս» երգչախումբը և բասկետբոլի «Կիլիկիա» թիմը պարբերաբար մասնակցում են կազմակերպվող սահմանափակ կարողությունների տեր մարդկանց համար տարբեր երկրներում կազմակերպվող համերգներին և մրցումներին` տուն վերադառնալով բարձր գնահատականների արժանացած:

Այս ամենը նպաստում է, որպեսզի նրանք հնարավորինս արագ ներգրավվեն հասարակական կյանքի մեջ և արժանանան ոչ թե կարեկցանքի, այլ դառնան նրա լիարժեք անդամը:

Կենտրոնի կարգախոսն է մարդասիրություն և պրոֆեսիոնա-լիզմ:

Այսօր կենտրոնը գլխավորում է բժիշկ և ադմինիստրատոր Ալեքսանդր Մնացականյանը:

**Activity area**

The main activity areas of the center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients' vocational training, psychosocial rehabilitation and sanatorium-and-spa treatment.

**Programs/projects**

The center continued co-operation with United Nations High Commission for Refugees and US Embassy in 2009. The goal of the co-operation is to support Armenian refugees from Iraq, offering Center's opportunities.

Activity of the Armenian Red Cross Society "Gratsia" international rehabilitation center is one of the best demonstrations of humanity.

In the center each patient with marrow and spinal cord injuries is individually treated and cared by a doctor, nurse, rehabilitation therapist, psychologist and sport trainer.

The center has broadened inpatient and outpatient rehabilitation services – diagnostics, hydropath, hydro massage, mud cure/peat cure, kinesitherapy, physiotherapy procedures, medical and classical massage, electrotherapy, inhalation therapy, acupuncture, sport complex, stressologist's room, SKENAR Department.

During its activities about 9 000 patients from Armenia, CIS countries, Europe and Middle East have already received treatment and rehabilitation in the center. In the Center, during the year, 600-700 disabled people, 35 veterans, 10-15 refugees, about 535 socially vulnerable people are cured.

In addition, dispensary home visits are made to the registered disabled patients with spinal cord and marrow traumas, providing them with medical assistance and examination. "Pharos" choir and "Kilikia" basketball team of the center regularly participate in concerts and competitions organized for people with limited capacities in different countries and return with high appreciations.

All these contribute to the faster integration of the patients into the society as its full members not requiring compassion.

The slogan of the center is humanity and professionalism.

Today the center is lead by doctor and administrator Aleksandr Mnatsakanyan.











# ՍՈՑԻԱԼ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

## Առողջապահական բաժին

# HEALTH AND CARE ACTIVITIES

## Health Department










**Տարվա նվաճումը**

1. Այս տարի հնարավորություն ընձեռնվեց նոր ծրագրում ընդգրկել Երևանի Ավան համայնքի պոլիկլինիկայում բուժման ամբուլատոր փուլում գտնվող 20 բազմադեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդի՝ տրամադրելով նրանց սոցիալ-հոգեբանական աջակցություն և տեղեկատվություն, ինչպես նաև ապահովելով նրանց բուժման ուղղակի վերահսկողությամբ:

2. Հանրապետությունում ռեգուլյար տուբերկուլոզով բոլոր հիվանդներին հնարավոր եղավ տրամադրել սոցիալական աջակցություն:

**Գործունեության ոլորտները**

Տուբերկուլոզի կանխարգելում և շահառուների բուժման աջակցություն, ՄԻԱՎ-ի կանխարգելում, ներերակային թմրամոլության վնասի նվազեցում:

**Տարվա ծրագրային գործունեություն**

2009թ. Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) Առողջապահական բաժինը Երևանում մեկնարկեց նոր՝ «Կանգնեցնել բազմադեղորայքակայուն տուբերկուլոզը (ԲԴԿ ՏԲ) ծրագիրը»: Ծրագիրը նախատեսված է 2009-2011թթ համար և իրականացվում է «Էլայ Լիլի և կոմպանիա» ընկերության, ինչպես նաև ծրագրի տեխնիկական գործընկեր Բժիշկներ առանց սահմանների - Ֆրանսիա (ԲԱՍ-ֆրանսիա) կազմակերպության աջակցությամբ: Այն գործում է Ավան համայնքի պոլիկլինիկայում՝ ընդգրկելով 20 շահառու տարբեր համայնքներից: Բուժումը չընդհատելու խրախուսման նպատակով հիվանդին տրամադրվում է սոցիալ-հոգեբանական աջակցություն, իսկ դեղորայքի ընդունման ուղղակի վերահսկողությունն ապահովում է բուժման բարեհաջող ավարտը:

Ծրագրի շրջանակներում հիվանդներին տրամադրվում է տեղեկատվություն, իսկ հանրության համար կազմակերպվում են լուսաբանման միջոցառումներ:

Իրականացման հենց առաջին իսկ տարում ծրագրիը գրանցեց իր առաջին հաջողությունը, երբ բուժումն ավարտեցին երեք շահառու:

Այս տարի ևս, Գլոբալ հիմնադրամի աջակցության շնորհիվ, ՀԿԽԸ Առողջապահական բաժինն իրականացնում է «ՀՀ-ում Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» ծրագիրը, որի նպատակն է ապահովել տուբերկուլոզով հիվանդների հետևողականությունը նշանակված բուժման ռեժիմին՝ տրամադրելով սոցիալական աջակցություն: Ծրագրի շրջանակներում իրականացվում է նաև հիվանդների և հանրության կրթում և լուսաբանում: Ծրագիրը հանդիսանում է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի» կարևոր բաղադրամասը:

**Achievement of the year**

1. This year it became possible to involve in the new project 20 multi drug-resistant tuberculosis patients in the outpatient phase of treatment from the policlinic of Avan community, Yerevan city. The patients were provided with psychosocial support and information, as well as direct observation treatment.

2. It became possible to provide all the regular tuberculosis patients throughout the country with social assistance.

**Activity area**

Tuberculosis prevention and encouraging patients' treatment adherence, HIV prevention and intravenous drug users' harm reduction.

**Programs/Projects**

In 2009 the Armenian Red Cross Society (ARCS) Health Department launched the new Stop Multi Drug-Resistant Tuberculosis (MDR TB) project in Yerevan. The project is planned for 2009-2011 and is being implemented through the support of Eli Lilly and Company, as well as through the technical assistance of Médecins Sans Frontières-France (MSFF). It operates in the policlinic of Avan community involving 20 beneficiaries from different communities. The patients are provided with psychosocial support as an incentive for treatment adherence and direct observation therapy for successful completion of treatment.

Within the framework of the project the patients are provided with information, and dissemination events are organized for general public.

During the first year of its implementation the project recorded its first success when three beneficiaries completed their treatment.

This year also, thanks to the support of the Global Fund, the ARCS Health Department implements Strengthening National TB Control Program in Armenia aimed at ensuring TB patients' treatment adherence, providing them with social support. Within the framework of the program education and dissemination among patients and general public is realized. The program constitutes an important component of National TB Control Program.

ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում Առողջապահական բաժինը իրականացրել է սեմինարներ ՀՀ մարզերի երիտասարդ զույգերի շրջանում, որի նպատակն էր լուսաբանել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և այլ սեռավարակների խնդիրները և խթանել ապահով վարքագիծ:

Երիտասարդական բաժնի հետ համատեղ իրականացվող «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում ընդգրկված 150 շահառուի տրամադրվեց սոցիալ-հոգեբանական աջակցություն և օգտագործված հագուստ:

Թմրամիջոցների ներերակային օգտագործողների խոցելիությունը ՁԻԱՀ-ի և հեպատիտի նկատմամբ նվազեցնելու նպատակով «Վնասի նվազեցում» ծրագրի շրջանակներում (2008-2009թթ.) շարունակում էր գործել Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ներարկիչների փոխանակման կենտրոնը, որտեղ թմրամիջոցների ներերակային օգտագործողներին տրամադրվում էին կանխարգելիչ պարագաներ, տեղեկատվական նյութեր, ցուցաբերվում առողջապահական և հոգեբանական աջակցություն: Ծրագրում ընդգրկված էին երկու աութրիչ աշխատող, որոնք այցելում էին շահառուներին իրենց հավաքատեղիներում և բաշխում կանխարգելիչ պարագաներ: Ընդհանուր առմամբ կենտրոնի ծառայություններից օգտվել է 65 շահառու:

Ծրագրի շրջանակներում վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ Վանաձոր քաղաքի երիտասարդության համար կազմակերպվել է երկու սեմինար:

**Բաժնի կողմից տարվա ընթացքում սպասարկված շահառուների թիվը**

«Կանգնեցնել բազմադեղորայքակայուն տուբերկուլոզը» ծրագրի շրջանակներում սպասարկվել է 20 շահառու:

«ՀՀ-ում Տուբերկուլոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» ծրագրի 600 շահառուներին որպես խրախուսանք բաշխվել են սննդային ծանրոցներ և հիգիենիկ փաթեթներ:

«ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում կրթվել է 175 երիտասարդ, իսկ ծրագրի ծառայություններից օգտվել է 150 ՄԻԱՎ-ով ապրող մարդ:

«Վնասի նվազեցում» ծրագրի շրջանակներում սպասարկվել է 65 շահառու:

In the sphere of HIV prevention the Health Department conducted seminars among young couples in the regions of the RA. The seminars were aimed at disseminating the problem of HIV/AIDS, as well as other sexually transmitted infections, and promoting safe behaviour.

150 beneficiaries were provided with psychosocial support and second-health clothes within the framework of HIV Prevention in Armenia project which the Health Department implemented jointly with the Youth Department.

To decrease the vulnerability of intravenous drug users (IDU) towards HIV and Hepatitis, within the framework of Harm Reduction project (2008-2009) the Syringes Exchange Centre of Vanadzor city, Lori region, continued to operate where the IDUs were provided with means of prevention, information materials, medical and psychological assistance. Two outreach workers were involved in the project who visited the beneficiaries at their assembly points and distributed means of prevention. In general, 65 IDUs were provided with services at the centre.

Within the framework of the project two seminars were conducted for the youth of Vanadzor city.

**Number of beneficiaries reached during the year**

20 MDR TB patients were involved in Stop Multi Drug-Resistant Tuberculosis project.

600 beneficiaries were provided with food parcels and hygiene kits as incentives within the framework of Strengthening National TB Control Program in Armenia.

150 people living with HIV were involved in HIV Prevention in Armenia project and 175 young people were trained.

65 intravenous drug users were reached by Harm Reduction project.









# ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժին

# DISASTER MANAGEMENT
**Disaster Management and Population Movement Departament**









**Տարվա նվաճումը**

ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի 95 դպրոցներում իրականացվեցին աղետներին նախապատրաստման ուսումնական լայնածավալ միջոցառումներ՝ ավելի քան 45.000 աշակերտների և ուսուցիչների ներգրավմամբ:

**Գործունեության ոլորտները**

Աղետների կառավարման (ԱԿ) ուղղության հիմնական նպատակն է նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը բնական և տեխնածին աղետների նկատմամբ՝ համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) աղետներին նախապատրաստման և արձագանքման (ԱՆԱ) համակարգը:

**Տարվա ծրագրային գործունեություն**

1988-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժի 20-ամյակի կապակցությամբ բաժինը նախաձեռնեց «Անվտանգ դպրոցներ հետերկրաշարժյա տարածքում» ծրագիրը, որը մեկնարկեց 2008թ նոյեմբերին և ավարտվեց 2009թ. մայիսին: Գյումրի, Սպիտակ, Վանաձոր և Ստեփանավան քաղաքների 85 դպրոցներում կազմակերպվեցին «Երկրաշարժ» խորագրով դասընթացներ և ուսումնական տարահանումներ, ինչպես նաև տպագրվեցին ուսումնական նյութեր: Ընդհանուր առմամբ՝ վերոնշյալ դասընթացներին և տարահանումներին մասնակցեցին 38.383 աշակերտներ և 2.671 ուսուցիչներ: Բոլոր 85 դպրոցներին բաշխվեցին նաև գրենական պիտույքներ, սպորտային և այլ պարագաներ՝ տրամադրված Վորլդ Վիժն Հայաստանի կողմից: Ծրագրի իրականացման ընթացքում ՀԿԽԸ սերտորեն համագործակցեց ՀՀ Կրթության և գիտության նախարարության, Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի և Արտակարգ ալիք լրատվական կենտրոնի հետ:

2009 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվեց «Աղետների ռիսկի նվազեցում» ծրագիրը, որի շահառուները ՀՀ Տավուշի մարզի տասը ռիսկային համայնքներն էին: Շահառու համայնքներում իրականացվեց խոցելիության և կարողությունների մանրակրկիտ գնահատում (ԽԿԳ): Դրա արդյունքների հիման վրա յուրաքանչյուր համայնքի համար մշակվեց ԽԿԳ զեկույց, որն իր մեջ ներառում է աղետներին նախապատրաստման և կանխարգելման գործողությունների պլան և ռիսկային գոտիների քարտեզ: Յուրաքանչյուր համայնքում կազմակերպվեց «Աղետների ռիսկի կառավարում» խորագրով դասընթաց համայնքի ղեկավարների, բնակչության և այլ տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների համար: Ընդհանուր առմամբ մասնակիցների թիվը կազմում էր մոտ 250: Վերոնշյալ 10 համայնքների դպրոցներում կազմակերպվեցին բնական աղետներ թեմաներով սեմինարներ, ուսուցողական տարահանումներ և «Մանկական վիկտորինա» խորագրով մրցույթ, ինչպես նաև տպագրվեցին ուսումնական նյութեր: Ընդհանուր առմամբ՝ վերոնշյալ միջոցառումներին մասնակցեց 3.621 աշակերտ և 339 ուսուցիչ:

**Achievement of the year**

Large-scale training sessions on disaster preparedness were organized in 95 schools of Shirak, Lori and Tavush regions of RA with involvement of more than 45.000 pupils and teachers.

**Activity area**

The main aim of Disaster Management (DM) direction is to reduce the vulnerability of the population towards natural and man-made disasters through disaster risk reduction on a community level and strengthen Disaster Preparedness and Response structure (DP&R) of the Armenian Red Cross Society (ARCS).

**Programs/projects**

"Safe Schools in Post Earthquake Area" project dedicated to the 20th anniversary of 1988 devastating earthquake in Spitak was launched in November 2008 and finished in May 2009. Training sessions and simulation evacuations titled "Earthquake" were organized in 85 schools of Gyumri, Spitak, Vanadzor and Stepanavan cities, as well as educational materials were printed. Totally 38.383 pupils and 2.671 teachers participated in the mentioned training sessions and evacuations. Stationery, sport accessories and other goods provided by World Vision Armenia were also distributed in all 85 schools. During the project implementation ARCS closely cooperated with the Ministry of Education and Science, National Survey for Seismic Protection, Crisis Management State Academy and Emergency Channel Informational Centre.

From September to December 2009 "Disaster Risk Reduction" project was implemented, beneficiaries of which were ten risky communities of Tavush region of RA.

A detailed vulnerability and capacity assessment (VCA) was conducted in the beneficiary communities. VCA report was developed per each community based on the results of the assessment which included a plan of action on disaster preparedness and prevention and risky areas map. In each community a training session on "Disaster Risk Reduction" was organized for about 250 people including heads of communities, population and representatives of other local organizations. Seminars, simulation evacuations and "Children Quiz" contest on natural disasters were organized at schools of mentioned ten communities, as well as educational materials were printed.

In total 3.621 schoolchildren and 339 teachers took part in the mentioned events.

ՀԿԽԸ դրամաշնորհ տրամադրվեց նաև Գերմանական տեխնիկական համագործակցության (ԳՏՀ) հայաստանյան գրասենյակի կողմից՝ իրականացնելու ԽԿԳ Տավուշի մարզի 40 և Լոռու 71 համայնքներում: Ծրագիրը մեկնարկեց 2008թ. նոյեմբեր ամսին՝ երեք ամիս տևողությամբ: Հաշվետու տարում ծրագրով իրականացվեց ԽԿԳ տասը համայնքներում և մշակվեց ուսումնասիրված բոլոր 111 համայնքների ավարտական զեկույցը:

ՀԿԽԸ մեկ այլ դրամաշնորհ տրամադրվեց ԳՏՀ հայաստանյան գրասենյակի կողմից՝ Տավուշի մարզի հինգ և Լոռու վեց համայնքներում «Աղետների ռիսկի նվազեցում» ծրագիրն իրականացնելու համար: Ծրագիրը մեկնարկեց 2009թ. նոյեմբեր ամսին՝ յոթ ամիս տևողությամբ: Հաշվետու տարում ծրագրով իրականացվեցին ԱԿ պլանավորման ուղեցույցի մշակման աշխատանքներ՝ ԳՏՀ փորձագետների հետ համատեղ:

**Լրացուցիչ գործունեություն**

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակը հիմնեց տարածաշրջանային Աղետների ռիսկի նվազեցման աշխատանքային խումբ, որի առաջին հանդիպումը տեղի ունեցավ նոյեմբեր ամսին Սերբիայում, որին, որպես խմբի անդամ, մասնակցեց ԱԿ/ԲՏ բաժնի վարիչը:

**Բաժնի կողմից տարվա ընթացքում սպասարկված շահառուների թիվը**

2009թ. ԱԿ ուղղության ծրագրերում ընդգրկվել են մոտ 45.364 շահառուներ ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերից:

ARCS was provided with a grant from German Technical Cooperation (GTZ) Armenia for conduction of VCA in 40 communities of Tavush region and 71 communities of Lori region. The project was launched in November 2008 with three months duration. During the reporting year, VCA was implemented in ten communities and a final report of 111 investigated communities was developed.

Another grant was provided to ARCS by GTZ Armenia to implement "Disaster Risk Reduction" project in five communities of Tavush and six communities of Lori regions. The project was launched in November 2009 with seven months duration. During the reporting year development of guidance on Disaster Management planning was conducted jointly with experts from GTZ.

**Additional information in brief**

Europe Zone office of the International Federation of Red Cross and Red Crescent Societies formed a Regional Disaster Risk Reduction Working group the first meeting of which was held in November in Serbia, where the Head of Disaster Management and Population Movement Department, as a member of the team, took part.

**Number of beneficiaries reached during the year**

In 2009 about 45.364 beneficiaries from Shirak, Lori and Tavush regions of the RA were involved in the projects implemented by DM direction.









# ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

## Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժին

# POPULATION MOVEMENT

## Disaster Management and Population Movement Departament








### Տարվա նվաճումը

Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) բնակչության տեղաշարժի (ԲՏ )ուղղությունն իրականացրեց «Երիտասարդությունն ընդդեմ թրաֆիքինգի» ծրագիրը՝ ուղղված բնակչության՝ հատկապես երիտասարդների իրազեկման մակարդակի բարձրացմանը թրաֆիքինգի վերաբերյալ: Արդյունքում ձևավորվեց ուսուցանողների թիմ և նկարահանվեց Ազգային ուղղորդման կարգի մասին ֆիլմ:

### Գործունեության ոլորտները

1. ՀՀ-ում ապաստան հայցողներին առաջնային աջակցության և իրավական խորհրդատվության տրամադրում, սահմանային մոնիթորինգի իրականացում, փախստականների հավանական հոսքի դեպքում վաղ ազդարարման մեխանիզմի ստեղծում:

2. ՀՀ բնակչության՝ հատկապես երիտասարդների իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված գործունեության իրականացում թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում:

### Տարվա ծրագրային գործունեություն

2009 թ. ԲՏ ուղղությունը շարունակեց իրականացնել ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնարարականատարի (ՓԳՀ) հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ «Աջակցություն ապաստան հայցողներին» ծրագիրը, որի շրջանակներում կարիքների գնահատման արդյունքների հիման վրա շահառուներին տրամադրվեց ֆինանսական, նյութական, առողջապահական, սոցիալական և իրավական աջակցություն, շարունակվեցին շաբաթական մոնիթորինգային այցերը ապաստան հայցողների համար հատուկ կացարան:

ՀՀ Ազգային անվտանգության ծառայության աջակցությամբ ՀԿԽԸ կողմից մոնիթորինգային այցեր իրականացվեցին ՀՀ չորս սահմանակետեր՝ Գոգավան, Բագրատաշեն, Բավրա և Մեղրի, ինչպես նաև «Արմենիա միջազգային օդանավակայաններ» («Զվարթնոց»): Ծրագրի անձնակազմը ներգրավվեց նաև վաղ ազդարարման մեխանիզմի կազմավորման գործում: Ավելին, ՄԱԿ ՓԳՀ-ի հետ համատեղ անցկացվեցին ՀՀ վերոնշյալ չորս սահմանակետերի և Այրումի երկաթուղային կայանի սահմանապահների համար ուսուցողական դասընթացներ՝ ուղղված սահմանապահ զորքերի՝ ՀՀ Փախստականների մասին օրենքի վերաբերյալ գիտելիքների և իրազեկության մակարդակի բարձրացմանը:

ՀԿԽԸ-ն ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիայի, Միջազգային երիտասարդական կամուրջներ հիմնադրամի և Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիայի հետ համատեղ իրականցրեց «Երիտասարդությունն ընդդեմ թրաֆիքինգի» ծրագիրը՝ Նորվեգիայի կառավարության և Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից իրականացվող «Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագիր» նախաձեռնության ֆինանսական աջակցությամբ,

### Achievement of the year

The Armenian Red Cross Society (ARCS) Population movement (PM) direction implemented "Youth against Trafficking" project aimed at raising awareness of the population particularly the youth on trafficking. As a result a Pool of Trainers was formed and a film about National Referral Mechanism was shot.

### Activity area

1. Provision of basic assistance and legal consultancy to asylum seekers in RA, implementation of border monitoring and establishment of an Early Warning System in case of a possible refugee influx.

2. Raising awareness on trafficking among population particularly the youth.

### Programs/projects

In 2009 PM direction continued the implementation of "Assistance to Asylum Seekers" project, with financial support of the Armenian representation of the United Nations High Commissioner for Refugees (UNHCR). Based on needs assessment results the beneficiaries were provided with financial, material, as well as medical, social assistance and legal consultancy, weekly monitoring visits to the Reception Centre for Asylum Seekers continued.

With support of National Security Service of RA monitoring visits were conducted to four border crossing points of RA - Gogavan, Bagratashen, Bavra and Meghri, as well as to "Armenia International Airports" ("Zvartnots"). Members of the monitoring team were also involved in establishment of an Early Warning System. In cooperation with UNHCR training sessions were organized for border guards of the four border crossing points mentioned above and Ayrum railway station aimed at raising the level of awareness of border guards on the Refugee Law of RA.

ARCS jointly with Armenian UN Association, International Youth Bridges Foundation and Audio-Visual Journalists Association implemented "Youth against Trafficking" project with financial assistance of the Government of Norway and United Nations Development Program (UNDP) "Anti-Trafficking Project".

որի նպատակն էր բարձրացնել ՀՀ բնակչության, մասնավորապես՝ երիտասարդների իրազեկությունը թրաֆիքինգի վերաբերյալ և զինել անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով:

Արդյունքում ձևավորվեց 30 երիտասարդներից կազմված ուսուցանողների թիմ, որոնք քարոզարշավներ կազմակերպեցին ՀՀ Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում: Իսկ երևանյան արշավը սկսեցին Հաղթանակի զբոսայգուց մինչև «Մոսկվա» կինոթատրոն՝ անցորդներին տրամադրելով ծրագրի շրջանակներում տպագրված տեղեկատվական նյութեր և ծանոթացնելով թրաֆիքինգ երևույթի հետ: Պատրաստվեց ֆիլմ Ազգային ուղղորդման կարգի մասին, որը կծառայի որպես կրթական նյութ թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության ուղղությամբ պետական մարմինների համագործակցության և ռազմավարության մշակման ու դրա իրականացման համար, վերակառուցվեց և պարբերաբար թարմացվելու է www.antitrafficking.am կայքը:

**Լրացուցիչ գործունեություն**

2009թ. ապրիլին ՀԿԽԸ-ն մասնակցեց PERCO (Փախստականների, ապաստան հայցողների և միգրանտների հարցերով եվրոպական Կարմիր խաչի համագործակցության հարթակ) ցանցի տարեկան գլխավոր հանդիպմանը, ինչպես նաև տարեկան հերթական հանդիպմանը և ընտրվեց որպես ցանցի ղեկավար խմբի անդամ:

**Բաժնի կողմից տարվա ընթացքում սպասարկված շահառուների թիվը**

2009թ. ԲՏ ուղղությունը սպասարկել է 86 ապաստան հայցողների Իրաքից, Իրանից, Կուբայից, Վրաստանից, Եթովպիայից, Թուրքիայից, Աբխազիայից և Կոտ Դիվուարից:

Թրաֆիքինգի դեմ ուղղված պայքարի արշավի շրջանակներում մասնագիտական գիտելիքներով զինվեցին 30 երիտասարդներ, ավելին քան 450 ՀՀ քաղաքացիներ ծանոթացան թրաֆիքինգի երևույթին և համապատասխան տեղեկատվություն ստացան դրա դեմ պայքարելու վերաբերյալ:

The aim of the project was to raise awareness of the Armenian population particularly the youth on trafficking as well as to provide the youth with corresponding knowledge and skills to fight against trafficking.

As a result a pool of trainers consisting of 30 young people was formed, that organized awareness raising campaigns in Armavir, Ararat, Kotayq, Shirak, Lori, Aragatsotn and Gegharquniq regions of RA. The campaign in Yerevan started from the Park of Victory to "Moscow" Cinema House and passers-by were provided with informational materials printed in the frames of the project. A film about National Referral Mechanism was shot which will serve as an educational material for cooperation of state bodies and development and implementation of a strategy for defending rights of victims of trafficking. The www.antitrafficking.am page was reconstructed and will be periodically updated.

**Additional information in brief**

ARCS took part in PERCO (Platform for European Red Cross Cooperation on Refugees, Asylum Seekers and Migrants) annual general meeting as well as annual regular meeting and was chosen as a member of a steering group.

**Number of beneficiaries reached during the year**

In 2009 services were provided to 86 asylum seekers from Iraq, Iran, Cuba, Georgia, Ethiopia, Turkey, Abkhazia and Cote d'Ivoire.

In the frames of the campaign against trafficking 30 young people were provided with professional skills and knowledge, more than 450 people became familiar with the phenomenon of trafficking and were provided with corresponding information on fighting against it.







# ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## Առաջին օգնության բաժին

# FIRST AID TRAINING METHODOLOGICAL CENTER

## First Aid Department











**Տարվա նվաճումը**

2009 թվականի հուլիսի 2-5-ը Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Առաջին օգնության (ԱՕ) ազգային հավաքականը, մասնակցելով Գերմանիայի Օլդենբուրգ քաղաքում կայացած ԱՕ Եվրոպական Առաջնությանը, եվրոպական 25 ուժեղագույն խմբերի շարքում գրավեց պատվավոր իններորդ տեղը` յոթ տարի շարունակ պահպանելով ՀԿԽԸ ԱՕ հավաքականի դիրքերը լավագույն տասնյակում:

**Գործունեության ոլորտները**

ՀԿԽԸ ԱՕ ուսումնամեթոդական կենտրոնը (ԱՕՈՒՄԿ) ԱՕ գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության տարբեր խավերի և տարիքային խմբերի շրջանում, իրականացնում է ԱՕ սպասարկում զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև աճող սերնդի անվտանգ վարքագծի դաստիարակմանն ուղղված գործունեություն է ծավալում:

Կենտրոնն անցկացնում է ԱՕ Եվրոպական Խորհրդատվական Կենտրոնի չափանիշներին համապատասխանող ԱՕ և Անվտանգ վարքագծի դաստիարակման դասընթացներ և սեմինարներ`տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի համար:

**Տարվա ծրագրային գործունեություն**

«Առաջին օգնության դասընթացներ ՀՀ հեռավոր համայնքների բնակիչների համար»

Ծրագրին մասնակցել են հեռավոր համայնքների ավելի քան 140 բնակիչներ: Այն իրականացվել է Սյունիքի, Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում: Բացի այդ իրականացվել են մեկ տարածաշրջանային և մեկ հանրապետական մրցումներ:

Առաջին օգնության ուսուցում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի օժանդակությամբ

Անցկացվել է «Առաջին օգնության հիմունքներ» վեց դասընթաց ՀՀ Տավուշի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի սահմանամերձ համայնքների բնակիչների համար: Դասընթացներին մասնակցել է 77 և որպես առաջին օգնող` որակավորվել 68 հոգի:

Քրեակատարողական հիմնարկների 20 աշխատակիցների համար անցկացվել է «Առաջին օգնության հիմունքներ» դասընթաց:

«Առաջին օգնության գործունեության համակարգում ԱՕՈՒՄԿ միջոցով»

Ծրագրի ընթացքում կազմվել են ԱՕ ծրագրերի առաջարկներ, մշակվել են համագործակցության համաձայնագրեր, իրականացվել են վերապատրաստման դասընթացներ և սեմինարներ:

**Achievement of the year**

Participating in the First Aid (FA) Convention in Europe (FACE 2009) in Oldenburg, Germany from 2 to 25 July 2009, the Armenian Red Cross Society (ARCS) First Aid National Team took the honorable ninth place among 25 strongest European teams and seven years uninterruptedly keeping ARCS FA National Team place in top ten places.

**Activity area**

The ARCS FA Training Methodological Center (FATMC) disseminates FA knowledge and skills among different layers and different age groups of population, provides FA services at mass events and carries out activities directed to the promotion of safe behavior of the growing generation.

The center conducts training courses and workshops on FA and safe behavior for different age groups and professional groups in accordance with standards of European Reference Center for FA Education.

**Programs/projects**

"First Aid Courses for inhabitants of RA remote communities"

More than 140 inhabitants of remote communities participated in the project which was implemented in Syunik, Tavush, Lori, Vayots Dzor, Gegharquniq and Shirak regions. Besides, one regional and one national competition took place.

First Aid trainings with support of International Committe of Red Cross

Six "Basic First Aid" training courses were held for inhabitants of Tavush, Syunik and Gegharquniq regions remote communities. 77 people participated in the mentioned sessions, 68 have been qualified as first aiders.

"Basic First Aid" training course for 20 staff members of criminal-executive institutions has been conducted.

"Systematization of FA by the FATMC"

During the program, FA program proposals have been prepared, cooperation agreements have been elaborated, training courses and seminars have been implemented.

**«Առաջին օգնության տարրեր» դասընթաց 10-12 տարեկան երեխաների համար**

Ծրագիրն իրականացվում է Գեղարքունիքի մարզի ութ համայնքներում՝ երեք փուլերով: Առաջին փուլով նախատեսված աշխատանքները կատարվել են 2009թ. ընթացքում, իսկ մյուս երկու փուլերը կիրականացվեն 2010-ին: Ծրագրի ավարտին 10-12 տարեկան մոտ 80 երեխաներ կտիրապետեն արտակարգ իրավիճակներում գործելու հմտություններին և ԱՕ ցուցաբերման հիմնական կանոններին:

**ՀԿԽԸ ԱՕ կամավորական խմբերի 10-րդ Ազգային բաց առաջնություն (Ծաղկաձոր, օգոստոսի 14-16 )**

Առաջնությանը մասնակցել է տարածաշրջանային մրցումներին լավագույն արդյունքներ ցուցաբերած ՀԿԽԸ ութ ԱՕ խումբ: Առաջնությանը հրավիրված էին նաև մեկական ԱՕ խմբեր ԼՂՀ-ից և Գերմանիայից: Մրցումների արդյունքում առաջին տեղը զբաղեցրեց Իջևանի ԱՕ խումբը:

**Լրացուցիչ գործունեություն**

2009թ. ԱՕ բաժնի կողմից իրականացվել են ԱՕ ծառայություններ ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի շրջանակներում անցկացված ֆուտբոլային 19 խաղերի ժամանակ:

2009թ. ընթացքում ՀԿԽԸ կամավորների և տարբեր կազմակերպությունների աշխատակիցների համար անցկացվել են ութ դասընթացներ:

**Բաժնի կողմից տարվա ընթացքում սպասարկված շահառուների թիվը**

2009թ. ընթացքում ԱՕ բաժնի կողմից իրականացված ծրագրերում ընդգրկված շահառուների թիվը կազմում է շուրջ 1100 մարդ:

**"Basic First Aid" training for children aged 10-12**

The program is implemented in eight communities of Gegharquniq region and consists of three rounds. The activities planned for the First round were carried out during 2009, and other two rounds will be realized in 2010. By the end of the program about 80 children aged 10-12 will have acquired necessary skills for acting in emergencies and knowledge of basic FA rules.

**The 10th Open National Competition of FA volunteering groups (14-16 August, Tsaghkadzor)**

ARCS eight FA groups, which showed the best results at regional competitions, took part in the competition. One FA group from Nagorno Karabakh Republic and one from Germany were also invited to take part in the championship. The first place was taken by the FA group from Ijevan.

**Additional information in brief**

During 2009 the ARCS FA department provided FA services in 19 football matches of FIFA and UEFA.

In 2009 eight courses were conducted for ARCS volunteers and staff of different organizations.

**Number of beneficiaries reached during the year**

About 1100 beneficiaries were provided services by the FA Department in 2009.










# ՈՐՈՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
## Որոնման բաժին

# TRACING SERVICE
## Tracing Department







**Տարվա նվաճումը**

Որոնում ծառայությունն իրականացրեց Ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորածների մինչմահու տվյալների հավաքագրման ծրագիրը, որը սկսվել էր 2008 թ. նոյեմբերի 1-ին և ավարտվեց 2009 թ. հունիսի 30-ին:

**Գործունեության ոլորտները**

Որոնում ծառայությունն ուղղված է բնակչության տեղաշարժի արդյունքում կազմալուծված ընտանիքների վերամիավորմանը, պատերազմների, հակամարտությունների և աղետների հետևանքով անհայտ կորածների որոնմանը և զոհվածների շիրիմների վայրը հաստատող փաստաթղթերի հայտնաբերմանը, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարահանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնմանը և հատկացմանը:

**Տարվա ծրագրային գործունեությունը**

2009թ. ծառայությունը ստացել է 57 որոնման հայտ: Կատարված աշխատանքների շնորհիվ ավարտվել է 29 հայտ, որոնցից 16-ը ստացել են դրական, իսկ 13-ը՝ բացասական արդյունք: Արագ արձագանքման հայտերի թիվը կազմել է 14:

12 Կարմիր խաչի ուղերձ հանձնվել է հասցեատերերին:

Հեռուստատեսային քարոզարշավի ընթացքում, 11 անհայտ կորածների որոնումը կազմակերպելու նպատակով, պատրաստվեց և «Երկիր Մեդիա», «Երևան» հեռուստաընկերությունների կողմից եթեր հեռարձակվեց սոցիալական հոլովակ: Հեռուստաքարոզարշավը նպաստեց որոնման մեկ հայտի դրական արդյունք ստանալուն և ծառայության լուսաբանմանը: Հոլովակի ցուցադրումից հետո ավելացավ Որոնում ծառայություն դիմողների թիվը:

**Լրացուցիչ գործունեություն**

2009թ. հոկտեմբեր-նոյեմբեր ժամանակահատվածում Որոնում ծառայությունն իրականացրեց հայտատու 14 ընտանիքների կարիքների գնահատում:

Ելնելով կարիքից՝ Որոնում ծառայությունը ցուցաբերել է հոգեբանական աջակցություն, տրամադրել է խորհրդատվություն, ուղղորդել է շահառուներին համապատասխան կազմակերպություններ իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար:

**Բաժնի կողմից տարվա ընթացքում սպասարկված շահառուների թիվը**

2009թ. ընթացքում Որոնում ծառայության կողմից սպասարկվել են ավելի քան 150 շահառուներ:

**Achievement of the year**

Tracing Service (TS) implemented program of Ante Mortem Data Collection of missing persons in relation to the conflict of Nagorno Karabakh which started on 1 November 2008 and finished on 30 June 2009.

**Activity area**

Tracing and restoration of family links lost trough population movement, searching of notifications confirming the place of the grave of the victims of wars, conflict and disasters, tracing or assistance in the tracing of documents confirming that a person was subjected to evacuation, captivity, forced departure or forced labor during Second World War.

**Programs/projects**

In 2009 TS received 57 tracing cases, out of which 29 cases have been completed. 16 cases have been closed positively, whereas 13 negatively. The number of rapid response cases was 14.

12 Red Cross messages have been delivered to the addressees.

In the frameworks of TV campaign, a social video clip was made and broadcast by "Yerkirmedia", "Yerevan" TV channels in order to organize tracing of 11 missing persons. TV campaign promoted to get a positive result on the case and dissemination of TS.

**Additional information in brief**

During October–November 2009 TS implemented Need Assessment of 14 families.

Based on needs TS provided beneficiaries with psychological support and consultations and guided the beneficiaries to appropriate organizations for legal consultations.

**Beneficiaries reached during the year**

More than 150 beneficiaries have been involved in TS Services in 2009.

# ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

## Լրատվության և լուսաբանման բաժին

# DISSEMINATION OF HUMANITARIAN VALUES AND PRINCIPLES

## Information and Dissemination Department

**Տարվա նվաճումը**

2009թ. մեկնարկեց «Մեր աշխարհը՝ Ձեր քայլը» քարոզարշավը, որն իր մեջ ներառում էր մի շարք միջոցառումներ, որոնց շնորհիվ հանրությունը ևս մեկ անգամ համոզվեց, որ Կարմիր խաչն աշխարհում գործող ամենահին և ամենամեծ մարդասիրական կազմակերպությունն է, որին պետք է անդամակցել և սատարել:

**Գործունեության ոլորտները**

Բաժնի գործունեության նպատակն է Շարժման առաքելության, հիմնարար սկզբունքների, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ/ԿՄ) խորհրդանշանների գործածության և պաշտպանության, Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) հիմունքների, Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) գործունեության վերաբերյալ գիտելիքների տարածումը բնակչության շրջանում՝ օգտագործելով տեղեկատվության տարածման բոլոր միջոցները:

**Տարվա ծրագրային գործունեություն**

ԿԽ/ԿՄ միջազգային շարժման համար 2009 թ. հոբելյանական տարեթիվ էր, որը հիշատակվեց Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման ստեղծման մտահաղացման 150 ամյակով, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽ/ԿՄ ՄՖ) հիմնադրման 90 և Ժնևի կոնվենցիաների 60 ամյակներով: Այս կապակցությամբ աշխարհի 186 երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, մեկնարկեց «Մեր աշխարհը՝ Ձեր քայլը» քարոզարշավը՝ նպատակ հետապնդելով աշխարհի ուշադրությունը հրավիրել մարդկության խնդիրների վրա: ՀԿԽԸ նույնպես անմասն չէր կարող մնալ այդ իրադարձություններին, և մայիսի 7-ին ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակում կազմակերպված մամլո ասուլիսով ազդարարվեց մի շարք միջոցառումների մեկնարկը՝ նվիրված վերոնշվածին:

Մայիսի 8-ին Երևանի կենտրոնական զբոսայգում մեծ շուքով նշվեց ԿԽ/ԿՄ համաշխարհային օրը: Միջոցառումն իր մեջ ներառում էր համերգ, լուսանկարների ցուցահանդես, լուսաբանում, ֆոնդերի հայթայթում, անդամների և կամավորների հավաքագրում, ինչպես նաև կավճանկարչության մրցույթ:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման ստեղծման մտահղացման 150 ամյակի կապակցությամբ Էրեբունի համայնքի Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնում կազմակերպվեց նկարչական մրցույթ, բեմականացում և պար, որին մասնակցեցին կենտրոնի սաները:

ՀԿԽԸ Լրատվության և լուսաբանման բաժինը մարզային և տարածքային մասնաճյուղերի լուսաբանման հրահանգիչների համար կազմակերպեց ՄՄԻ հիմնարար սկզբունքների վերաբերյալ դասընթաց, որի նպատակն էր բարձրացնել հրահանգիչների գիտելքները՝ հետագայում դրանք պրակտիկ գործունեության մեջ կիրառելու նպատակով:

**Achievement of the year**

The Campaign "Our World. Your Move" launched in 2009 included a number of events through which the public once again recognized that the Red Cross is the oldest and biggest humanitarian organization in the world which needs their support and membership.

**Activity area**

The objective of the department is to disseminate the mission of the Movement, its Fundamental Principles, promote use and protection of Red Cross and Red Crescent (RC/RC) emblem, spreading knowledge on principles of International Humanitarian Law (IHL) and the Armenian Red Cross Society (ARCS) activities among the population using all means of spreading information.

**Programs/projects**

2009 was a jubilee year for the International Movement of Red Cross and Red Crescent. 150 years of the RC/RC International Movement, 90 years of the formation of the International Federation of Red Cross/Red Crescent Societies (IFRC) and the 60 years of the Geneva Conventions were celebrated. With that purpose, in 186 countries of the world, as well as in Armenia, the Global Campaign “Our World. Your Move” was launched with the objective to focus the world's attention on humanitarian problems. The ARCS couldn't stay indifferent to these events and on May 7 in the ARCS Headquarter held a conference to announce the launch of the Campaign “Our World. Your Move” which was followed by the number of events.

On the 8 of May, RC/RC International Movement day was greatly celebrated in The Central Park of Yerevan. The event included a concert, photo exhibition, dissemination, resource mobilization, members and volunteers recruitment, as well as a chalk drawing competition.

The drawing competition, role play and dancing were organized in "Children and Youth Art Center" of Erebuni community to celebrate the 150th anniversary of the idea of creation of RC/RC. The pupils of Center participated in it.

A Basic IHL training course was organized for dissemination officers of ARCS Regional and Territorial Branches. The purpose of the course was to raise the instructors' knowledge on IHL to further use the knowledge acquired in practical activities.
















Ծաղկաձորում անցկացված 5-րդ դատախաղ մրցույթի շրջանակներում ՀԿԽԸ Լրատվության և լուսաբանման բաժինը Կարմիր Խաչի միջազգային կոմիտեին ցուցաբերեց տեխնիկական և մարդկային ռեսուրսներով աջակցություն:

ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ համագործակցությամբ անցկացվեց «Պատերազմ և մարդասիրություն» թեմայով շարադրության մրցույթ, որին մասնակցեցին ՀՀ հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանի 312 աշակերտներ: Մրցույթի նպատակն էր ամփոփել ՀԿԽԸ, ինչպես նաև Շարժման առաքելության և գործունեության վերաբերյալ գիտելիքների մակարդակը:

**Լրացուցիչ գործունեություն**

Լրատվության և լուսաբանման բաժինը ՀԿԽԸ տարբեր բաժինների կողմից իրականացված միջոցառումների ժամանակ լուսաբանել է ԿԽ և ԿՄ միջազգային շարժումը, բաղկացուցիչները, ՄՄԻ-ը, ՀԿԽԸ պատմությունը և գործունեությունը, ինչպես նաև խորհրդանշանների գործածությունը և չարաշահումը:

Բաժինը Շարժման և ՀԿԽԸ գործունեությունը հանրությանն արդյունավետ ներկայացնելու նպատակով պարբերաբար համագործակցել է ԶԼՄ-ների հետ, ինչպես նաև ամփոփել 2008 թ-ի իր գործունեությունը հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակելով «ՀԿԽԸ 2008թ-ի տարեկան զեկույցը» և ՀԿԽԸ գործունեությունը ներկայացնող տեղեկագրերը՝ հունվար-հունիս, հուլիս-դեկտեմբեր ամիսների կտրվածքով:

**Բաժնի կողմից տարվա ընթացքում սպասարկված շահառուների թիվը**

2009 թվականի ընթացքում ՀՀ բոլոր մարզերում լուսաբանման աշխատանքներ են տարվել ավելի քան 17.500 մարդկանց համար, բաշխվել են շարժումը լուսաբանող ավելի քան 7.000 տպագիր նյութեր:

ARCS Information and Dissemination Department provided the ICRC with technical and human support in organizing of the fifth Moot Court Competition which was held in Tsakhkadzor.

In co-operation with the Ministry of Education and Science of the RA the composition contest was organized with the title "War and Humanity" among the 312 schoolchildren of 9th grade of the Republic of Armenia. The purpose of the competition was to summarize the knowledge level on ARCS as well as the mission and activities of Movement.

**Additional information in brief**

Information and Dissemination Department disseminated the RC/RC International Movement, its components, IHL, ARCS history and activities, as well as using and misuse of symbol during different events organized by Departments of ARCS.

In order to effectively present to the society the activities of Movement and ARCS, the department regularly cooperated with mass media, as well as summarized its activities in 2008 by publishing in Armenian and English languages and The "ARCS Annual Report 2008" and newsletters on the main activities covering the period of January-June, July-December.

**Number of beneficiaries reached during the year**

Dissemination activities were held for 17.500 people; more than 7.000 printed materials were distributed among population in all regions of the Republic of Armenia during 2009.

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ
## Երիտասարդական բաժին

# RED CROSS YOUTH
## Youth Department

**Տարվա նվաճումը**

2009թ. Գլոբալ Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծրագրին» ներկայացված առաջարկը ճանաչվել է լավագույնը՝ գրանցելով նշանակալից առաջընթաց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված դասընթացների և հանրային լայնածավալ միջոցառումների արդյունավետ անցկացման և միջազգային մակարդակում փորձի փոխանակման գործընթացներում:

**Տարվա ծրագրային գործունեություն**

Երիտասարդական Կարմիր Խաչի (ԵԿԽ) մարզային և տարածքային մասնաճյուղերի 40 կամավորներ ներգրավված են եղել «Սոցիալ-հոգեբանական ծառայություն փախստական ծերերին» ծրագրում, որի շրջանակներում տարվա ընթացքում նրանք այցելել են 400 միայնակ տարեցների՝ տրամադրելով սնունդ և հիգիենիկ պարագաներ, կազմակերպելով զանազան սոցիալական և մշակութային միջոցառումներ:

«Ժպիտների ակումբ» ծրագրի նպատակն է մեղմել հանրակացարանաբնակ ընտանիքների 125 երեխաների մեկուսացվածությունը և նպաստել նրանց կրթական խնդիրներին՝ կազմակերպելով բազմաբնույթ դասընթացներ, ժամանցային և սպորտային միջոցառումներ, ամառային վրանային ճամբարներ: Ծրագրի այս տարվա նվաճումներից էր հանրակացարանաբնակ երեխաների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ դասընթացներին մասնակցած նրանց հասակակից դպրոցականների համար կազմակերպած էքսկուրսիաները, որոնք շփման և ինտեգրման մեծ հնարավորություն ընձեռեցին երեխաներին:

Շուրջ 31 առավել կարիքավոր ծնողազուրկ երեխաներ շարունակում են ստանալ եռամսյակային դրամական նպաստ Լիոնի «Հայ Կարմիր Խաչի օգնության կոմիտեի» կողմից: Նրանց համար կամավորների ուժերով ամռանը կազմակերպվել է վրանային ճամբար:

Այս տարի ևս Երիտասարդական բաժինը (ԵԲ) իրականացրեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերը՝ Ամերիկյան Կարմիր խաչի և Գլոբալ Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներին նոր թափ հաղորդեցին առավել շատ օգտագործվող ինտերնետային կայքերում տեղեկատվության տեղադրումը և ՀՀ առաջատար բջջային օպերատոր ՎիվաՍել-ՄՏՍ-ի բաժանորդներին բջջային կարճ հաղորդագրությունները, որոնք որպես նորարական մեթոդներ լավ հնարավորություն ընձեռնեցին իրազեկել ազգաբնակչությանը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրների վերաբերյալ:

Դեկտեմբերի 1-ին՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրը, կազմակերպվեց բաց դաս Երևանի մի շարք դպրոցներում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեմայով՝ մշակույթային և հասարակական գործիչների, ինչպես նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանի և ՎիվաՍել-ՄՏՍ Գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի մասնակցությամբ: Բաց դասի նպատակն էր բարձրացնել աշակերտների իրազեկությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրների և դրանց կանխարգելման վերաբերյալ:

**Achievement of the year**

In 2009, the "Support to National HIV/AIDS Programs", funded by the Global Fund, was recognised as the best program, representing significant progress in organizing effective HIV/AIDS prevention sessions in schools, as well as major public events and experience sharing at the international level.

**Programs/Projects**

40 Red Cross Youth (RCY) volunteers from Regional and Territorial Branches were involved in the "Psychosocial Care to Elderly Refugees" program. Within the framework of this program they visited 400 lonely elderly people, distribute food and hygiene supplies, and organise different social and cultural events throughout the year.

The purpose of the "Smiley Club" program is to alleviate the isolation of 125 children coming from families living in dormitories and contribute to their education; organising training sessions, entertainment and sporting events and summer camps. The achievement of the project was the organisation of joint excursions for children living in the dormitories and their peers, schoolchildren participating in HIV/AIDS peer education sessions, providing them with an opportunity to integrate into society.

About 31 vulnerable orphans continued to receive financial support on a quarterly basis from the Lyon Branch of the "Committee for Support to the Armenian Red Cross". A summer camp was also organized for them by youth volunteers.

This year as well the Youth Department implemented HIV/AIDS prevention program with financial support of the American Red Cross and the Global Fund. Use of innovative methods such as placing information on popular social networking sites and SMS campaigns to the subscribers of RA leading mobile operator VivaCell-MTS brought HIV/AIDS awareness activities to a new level and gave an opportunity to effectively inform public on HIV/AIDS issues.

On 1 December, World AIDS Day, open lesson was organized on HIV/AIDS in number of schools of Yerevan with participation of cultural and public actors, as well as the Armenian Red Cross Society (ARCS) Secretary General Anna Yeghiazaryan and VivaCell-MTS General Manager Ralf Yirikyan. The purpose of the lesson was to raise awareness of schoolchildren on HIV/AIDS issues and their prevention.



















2009թ. հունիսին ՀԿԽԸ պատվիրակությունը աշխարհի շուրջ 149 Ազգային ընկերությունների (ԱԸ) ավելի քան 500 երիտասարդների հետ մասնակցեց Սոլֆերինոյում (Իտալիա) կայացած երրորդ Համաշխարհային Երիտասարդական Հավաքին:

Հավաքի ժամանակ կազմակերպվել էին մոտ երեք տասնյակ դասընթացներ, երիտասարդների ուժերով կազմվեց Երիտասարդական Հռչակագիրը՝ ուղղված աշխարհի առաջնորդներին և համաշխարհային կազմակեպություններին: Հավաքի ժամանակ ՀԿԽԸ անցկացրեց ՄԻԱՎ-ի կանխարգելման թեմայով դասընթաց: Հավաքը եզրափակեց ջահերով երթը՝ Սոլֆերինոյից դեպի Կաստիլիոնե կոչվող բնակավայր՝ ի հիշատակ Կարմիր խաչի (ԿԽ) առաջին կին կամավորների, ովքեր 150 տարի առաջ նույն տարածությունը հաղթահարել են՝ Սոլֆերինոյի ճակատամարտի վիրավոր զինվորներին տեղափոխելով մոտակա հիվանդանոց: Երիտասարդական Մեծ Հավաքին հաջորդեց «Մի Գաղափարի Ճամփորդություն» երթը Սոլֆերինոյից դեպի Ժնև: Երթը ընթացավ այն նույն երթուղով, որով Անրի Դյունանը 150 տարի առաջ անցել էր իր ճամփորդության ժամանակ:

2009թ. Միջազգային համագործակցության շրջանակ-ներում ԵԿԽ հյուրընկալել է Եվրոպական Կամավորական Ծառայության հինգ կամավորների Բրիտանական և Գերմանական ԿԽ-ից: Կամավորներն ակտիվորեն ներգրավված են եղել ԵԲ գործունեության մեջ, նախաձեռնել և իրականացրել են բազմաբնույթ միջոցառումներ և պատրաստել են ԵԲ գործունեությունը լուսաբանող էլեկտրոնային տեղեկագիր:

ՀԿԽԸ անդամակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի երիտասարդական հանձնաժողովին: Հանձնաժողովի անդամ ԵԲ ներկայացուցիչն ակտիվորեն մասնակցել է տարածաշրջանի երիտասարդության խնդիրների բարձրաձայնման և դրանց հնարավոր լուծումների որոնման և քննարկման աշխատանքներին:

**Բաժնի կողմից տարվա ընթացքում սպասարկված շահառուների թիվը**

«Ժպիտների ակումբ» -125 հանրակացարանաբնակ երեխաներ, «Սոցիալ-հոգեբանական ծառայություն փախստական ծերերին» - 400 տարեցներ, ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում - 4400 դպրոցականներ, 80000 ընդհանուր ազգաբնակչություն, «Ֆրանսիական խնամակալության ծրագիր»- 31 ծնողազուրկ անապահով երեխաներ:

In June 2009, a delegation from ARCS, along with more than 500 young people from 149 National Societies (NS), participated in the third "World Youth Meeting" in Solferino, Italy.

During the meeting around 30 training sessions were organised. A Youth Declaration, addressed to world leaders and worldwide organizations, was prepared by the young volunteers. The ARCS conducted a training session on HIV prevention during the meeting.
The meeting was concluded with a torchlight procession from Solferino to the settlement called Castilione, which was dedicated to the memory of the first Red Cross (RC) female volunteers, who crossed the same distance 150 years ago with the purpose of taking wounded soldiers to the nearest hospital. The big Youth Meeting was succeeded by a march called "A Journey of an Idea" from Solferino to Geneva. The march took the same route that Henri Dunant followed 150 years ago during his journey.

Within the framework of international cooperation, in 2009 the RCY accepted five volunteers from the European Voluntary Service (from the British and German RCs). The volunteers were actively involved in Youth Department activities, carrying out and implementing various events, and preparing an electronic newsletter to disseminate information about the activities of the Youth Department.

The ARCS is a member of the International Federation of Red Cross/Red Crescent Societies (IFRC) Youth Commission. Member of a commission, representative of the ARCS Youth Department actively participated in raising regional youth problems and finding possible solutions to them, as well as taking part in discussions.

**Number of beneficiaries reached during the year**
"Smiley Club" – 125 children living in dormitories; "Psychosocial Care to Elderly Refugees" – 400 elderly refugees; "HIV prevention in Armenia" – 4,400 schoolchildren, 80,000 members of the general population; "French Care" – 31 vulnerable orphans.

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
## Միջազգային կապերի բաժին

# INTERNATIONAL ACTIVITIES
## International Affairs Department

**Տարվա նվաճումը**

Հաշվետու տարվա ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից միջազգային ոլորտում կարևոր նվաճումներից էին ձեռք բերված նոր կապերը և ընդլայնված համագործակցությունը մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև քույր Ազգային ընկերությունների հետ:

**Գործունեության ոլորտները**

Ապահովել և խթանել համագործակցությունը և կապը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման բոլոր բաղկացուցիչների, միջազգային և տեղական կազմակերպու-թյունների հետ:

**Տարվա ծրագրային գործունեություն**

2009թ-ի ընթացքում ՀԿԽԸ-ն իրականացրել է համատեղ ծրագրեր և համագործակցել է Նորվեգական, Գերմանական, Իսպանական, Ճապոնական, Ամերիկյան, Բրիտանական, Բուլղարական Կարմիր խաչերի, Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի ճյուղային կազմակերպության, Հայկական Կարմիր խաչի փոխօգնության կոմիտեի Լեոնի մասնաճյուղի, ՄԱԿ-ի, GTZ-ի և մի շարք այլ միջազգային և տեղական կազմակերպությունների հետ:

Տարվա ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերությունը մասնակցել է մի շարք կարևոր միջազգային հանդիպումների, սեմինարների և այլն: ՀԿԽԸ շուրջ 20 աշխատակիցներ և կամավորներ ներկայացրել են Ազգային ընկերությունը միջազգային տարբեր նշանակալի միջոցառումների ընթացքում, մի շարք տարածաշրջա-նային, ինչպես նաև միջազգային համագործակցության հանդիպումների և դասընթացների, Առաջին օգնության Եվրոպական մրցույթի, պարբերաբար կազմակերպվող սեմինարների և կոնֆերանսների, ուսումնական դասընթացների, ճամբարների և այլ հանդիպումների ժամանակ:

Սույն թվականի հոկտեմբերի 31-ին տեղի ունեցավ Հայկական Կարմիր խաչի ընկերության 21-րդ հերթական համագումարը, որի ժամանակ ՀԿԽԸ նախագահ վերընտրվեց Մխիթար Մնացականյանը:

Նոյեմբերի 17-21-ը Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում տեղի ունեցավ Գլխավոր Ասամբլեայի 17-րդ համագումարը, իսկ նոյեմբերի 23-25-ը՝ Պատվիրակների խորհուրդը:

Հանդիպմանը Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ներկայացնում էին ՀԿԽԸ Գլխավոր քարտուղար՝ Աննա Եղիազարյանը և Միջազգային կապերի բաժնի վարիչ՝ Մարիանա Հարությունյանը: Հանդիպման ընթացքում կայացած քննարկումները և ընդունված որոշումները նպատակաուղղված են ամբողջ աշխարհում աճող մարդասիրական կարիքներին ավելի արդյունավետ արձագանքելուն: Հանդիպման ժամանակ տեղի ունեցան Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի նախագահի, փոխնախագահների և նախագահության անդամների ընտրությունները:

Քանի որ հանդիպումն առաջին անգամ էր կազմակերպվում Աֆրիկայում, առանձնակի ուշադրություն էր սևեռված մայրցամաքի զարգացման յուրահատուկ մարտահրավերների վրա:

2009թ-ի ընթացքում, Հայկական Կարմիր խաչի ընկերության միջազգային համագործակցության շրջանակներում, տարբեր առաքելություններով Հայաստան են այցելել միջազգային մի շարք պատվիրակություններ:

**Achievement of the year**

The main achievement of the Armenian Red Cross Society (ARCS) for the current year is new international relations and strengthened cooperation with a number of local and international organizations, as well as sister National Societies.

**Activity area**

To promote cooperation and relations between all components of Red Cross and Red Crescent Movement, governmental, non-governmental and international organizations.

**Programs/projects**

In 2009 ARCS continued implementation of joint programs strengthening cooperation with Norwegian, German, Spanish, Japanese, American, Bulgarian, British Red Crosses, Baden-Wuerttemberg Provincial Branch of German Red Cross, Lyon Branch of the Committee for support to the Armenian Red Cross, UN agencies, GTZ and a number of international and local organizations.

Throughout the year ARCS participated in a number of international meetings, seminars and etc.

About 20 ARCS members and volunteers presented the NS during various important international events, in a number of regional, as well as international cooperation meetings and training sessions, FACE 2008, regularly organized seminars and conferences, international camps and other meetings.

The Armenian Red Cross Society 21st General Assembly took place on 31 October, 2009, during which Dr. Mkhitar Mnatsakanyan has been re-elected as the President of the Armenian Red Cross Society.

On 17-21 November the 17th Session of the General Assembly took place in Nairobi, Kenya followed by the Council of Delegates on 23-25 November.

ARCS was represented at the meetings by Dr. Anna Yeghiazaryan, Secretary General and Ms. Mariana Harutyunyan, Head of International Affairs Department.

The discussions and decisions made during the meetings aimed at strengthening the Movement capacity to respond more effectively to the growing humanitarian needs all over the world.

During the meeting the elections of the President, Vice Presidents and members of the Governing Board of the International Federation of Red Cross and Red Crescent took place.

As it was the first time that the meeting was held in Africa, a special focus was made on the unique development challenges of the continent.

During 2009, within the framework of ARCS international cooperation a number of international delegations visited Armenia with different missions.











# ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

# ACTIVITIES OF GERMAN RED CROSS IN ARMENIA









**Գործունեության ոլորտները**

Բնակչության կարիքավոր խմբի սոցիալական օժանդակության կազմակերպում:

**Տարվա ծրագրային գործունեություն**

2009թ.-ի հոկտեմբերի 2-ին մեծ բարերար, Հայաստանում «Գթության խոհանոց» ծրագրի ղեկավար՝ քահանա Կառլ-Հայնց Շայդեն, պաշտոնապես բացեց «Գթության խոհանոց» ծրագրի 16-րդ շրջանը: Ծրագրի շահառուներն են Երևանի Աջափնյակ, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների սոցիալական ծառայությունների կողմից ընտրված շուրջ 420 սոցիալապես առավել անապահով միայնակ թոշակառուներ, հաշմանդամներ, ծնողազուրկ երեխաներ, որոնք օրական մեկ անգամ ստանում են տաք, բարձր կալորիականությամբ սնունդ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի Շվեբիշ-Գմյունդ քաղաքի Գթության խոհանոցի ընկերական շրջանի կողմից հանգանակված գումարներով: Ծրագրին աջակցում են Երևանի քաղաքապետարանը, Հայաստանում Գերմանիայի դեսպանատունը, Երևանի Աջափնյակ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանները, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

«Տնային խնամք» ենթածրագրում ընգրկված են «Գթության խոհանոց» ծրագրի շուրջ 31 շահառուներ, որոնք անկողնային հիվանդ կամ հաշմանդամ են և չեն կարողանում ինքնուրույն հոգալ առօրյա կարիքները: Այցելու քույրերի, կամավորների և բժշկի օգնությամբ վերջիններս ստանում են իրենց հասանելիք սնունդը, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական և բժշկական օգնություն:

«Մանկական սնունդ» ենթածրագրի շահառուներն են բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, բարձր ռիսկային խմբի երեխաները, փողոցի, մուրացիկ, սոցիալապես խիստ անապահով երեխաները, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաները, հաշմանդամ՝ մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող երեխաները, վարքի դժվարություններ ունեցող երեխաները, ինչպես նաև սահմանամերձ շրջանների խոցելի խմբի երեխաները՝ ընդհանուր թվով 210 հոգի:

Ծրագրի շահառու կազմակերպություններն են՝ ք. Գյումրու «Համայնքային զարգացման և աջակցության կենտրոնը», ք. Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ԲՀԿ-ն, ք. Վանաձորի «Խաչվող ուղիներ» ՀԿ-ն, ք. Երևան «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնը, ք. Մարտունու «Կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն, ք. Բերդի «Սոսե մայրերի ասոցիացիան»:

**Լրացուցիչ գործունեություն**

Պետական և ոչ պետական սոցիալական օժանդակության սանդղակից դուրս մնացած և սակավ օժանդակություն ստացող կարիքավոր անձանց սոցիալական կարիքների գնահատում և հասցեավորված օժանդակության ցուցաբերում:

**Activity area**

Provision of social assistance to the vulnerable group of population.

**Programs/projects**

On 2 October, 2009, the great humanist, program manager of "Soup Kitchen", priest Karl-Heinz Scheide officially opened the 16th season of the "Soup Kitchen". The beneficiaries of the program are about 420 socially most vulnerable lone elderly, disabled people and orphans, selected by social services of Ajapnyak, Arabkir and Qanaqer-Zeytun communities of Yerevan, who receive hot and high-calorie food once a day.

The program is implementing with financial support of "Soup Kitchen" friend circle in Schwaebisch-Gmuend town of Germany. The program is also supported by the Municipality of Yerevan, German Embassy in Armenia, Community Municipal offices of Ajapnyak and Qanaqer-Zeytun Communities, the Ministry of Labor and Social Affairs of RA.

"Home Care" project includes about 31 beneficiaries of "Soup Kitchen" program who are bed-ridden or handicapped and are not able to meet their daily needs themselves. The beneficiaries receive their food, as well as psychosocial and medical support by visiting nurses, volunteers and a physician.

Beneficiaries of "Child Food" mini-project are in total 210 children from large and socially needy families, children from high risk group, street, handicapped children, half-orphans and orphans, beggars, children with mental and physical disabilities, children with behavior problems and children from vulnerable groups of border line communities.

Beneficiary organizations of the program are "Community Development and Support" Center in Gyumri, "Fill Life" charity NGO in Stepanavan, "Crossing Roads" NGO in Vanadzor, "Salvation" center of handicapped children and youth in Yerevan, "Women's community council" NGO in Martuni, "Sose mothers' association" in Berd.

**Additional information in brief**

Social needs assessment and provision addressed support to people in need receiving little support or left out of governmental and non-governmental social support programs.

# ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄ

# RESOURSE MOBILIZATION

**Տարվա ծրագրային գործունեություն**

Երիտասարդական Կարմիր խաչի (ԵԿԽ) կամավորների ուժերով ստեղծված ռեսուրսների հայթայթման խումբը մշակել և հաջողությամբ իրականացրել է ռեսուրսների հայթայթման բազմաթիվ ակցիաներ: Հանգանակության տուփեր են տեղադրվել Երևանի հանրային վայրերում, պատրաստվել են զարդեր և բացիկներ, որոնք իրացվել են ցուցահանդես - վաճառքների միջոցով: Հանգանակությունից և վաճառքից հայթայթված գումարը հատկացվել է հանրակացարանաբնակ երեխաների կարիքներին ուղղված ծրագրերին:

Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽՄՖ) Կազմակերպության զարգացման ծրագրերի շրջանակներում Երիտասարդական բաժինը, համագործակցելով Լուսաբանման և լրատվության բաժնի հետ, իրականացնում է «Կարմիր խաչը քեզ համար, իսկ դու Կարմիր խաչի համար» դրամաշնորհային ծրագիրը, որի նպատակն է բազմաբնույթ հանրային միջոցառումներից բաղկացած համընդհանուր քարոզարշավի միջոցով զարգացնել Ազգային ընկերության (ԱԸ) կարողությունները հաղորդակցության և ռեսուրսների հայթայթման ոլորտներում: Ծրագիրը մեկնարկեց Մամլո Կոնֆերանսով, որին հաջորդած ծրագրի երեք փուլերը քայլ առ քայլ տեղեկություն էին տարածում Կարմիր խաչի շարժման, առաքելության, Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) գործունեության մասին: Ծրագրի շրջանակներում մեծ ձեռքբերում էր առաջատար բջջային օպերատորի՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ համագործակցության հաստատումը, ինչն ամրագրվեց երկու կողմերի միջև ստորագրված Փոխըմբռնման հուշագրով:

Հաստատված համագործակցության շրջանակներում Երևանում և մոտակա մարզեր տանող մայրուղիների վրա տեղադրվեցին ՀԿԽԸ գործունեության ոլորտներից մեկը՝ ՄԻԱՎ-ի կանխարգելումը լուսաբանող ավելի քան 30 գովազդային վահանակներ: Երիտասարդ կամավորների մասնակցությամբ նկարահանվեցին և հեռարձակվեցին մոտ տասը թոք շոուներ, չորս սոցիալական գովազդներ և պատրաստվեցին երկու ռադիո հաղորդումներ:ՀԿԽԸ գործունեությունը հանրությանը առավել արդյունավետ լուսաբանելու նպատակով ծրագրում ընդգրկված կամավորների համար կազմակերպվեցին լուսանկարչական և լրագրողական հմտությունները զարգացնող հինգ թրեյնինգներ: Ծրագրի եզրափակիչ փուլը իրականացվելու է սոցիալական քարոզարշավով՝ «Նրանք սպասում են մեզ... » կարգախոսի ներքո, որի ընթացքում կազմակերպված լայնածավալ իրազեկման և դրամահավաքի միջոցառումները կնպաստեն ՀԿԽԸ գործունեության ճանաչմանը և հանրակացարանաբնակ տարեցներին աջակցող ծրագրերի իրականացմանը:

2009թ. նոյեմբերից Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ԿԽՄՖ նախաձեռնությամբ իրականացնում է «Աջակցություն գործընկերոջը» ծրագիրը Բուլղարական Կարմիր խաչի հետ, որն իր ավարտը կունենա 2010 թ. հունիսին: Ծրագրի նպատակն է երկու ԱԸ միջև հիմնել գիտելիքի և փորձի փոխանակման արդյունավետ գործընթաց՝ ռեսուրսների հայթայթման և մասնաճյուղերի զարգացման նպատակով: Փոխադարձ այցելությունները և քննարկումները խթան հանդիսացան երկու ԱԸ լավագույն փորձի փոխանակման և ռազմավարական փաստաթղթերի փաթեթի մշակման համար: Բուլղարական Կարմիր Խաչի ներկայացրած առաջարկները նպաստեցին նաև ԱԸ ռեսուրսների հայթայթման աշխատանքային պլանի բարելավմանը՝ ապահովելով ռեսուրսների հայթայթման առավել համակարգված մոտեցում ազգային և տեղական մակարդակներում:

**Programs/Projects**

A resource mobilisation team, consisting of youth volunteers developed and successfully implemented various fundraising activities. Charity boxes were placed in public places across Yerevan, and jewellery and cards were made to be sold during sale-exhibitions. The funds raised from these donation boxes and sales went to the programs dedicated to supporting children living in dormitories.

Within the framework of the Organisational Development program of the International Federation of Red Cross/Red Crescent Societies (IFRC), the Youth Department, jointly with the Information and Dissemination Department, implements the "Red Cross for you and you for the Red Cross" grant program. The purpose of the program is to develop the capacity of the National Society (NS) in the field of communication and resource mobilization via global campaign consisting of various public events. The program was launched with a press conference, followed by a three-phase step by step campaign of information dissemination about the activities of the Red Cross, its mission, and the activities of the Aremanian Red Cross Society (ARCS). The establishment of cooperation with the leading mobile operator VivaCell-MTS was a great achievement within the framework of the program which was consolidated by a memorandum of understanding signed by the two parties. As part of this established cooperation, more than 30 billboards informing the public about the ARCS's HIV prevention activities were placed in the streets of Yerevan and on nearby highways leading to the other regions. About ten talk-shows, four social advertisements and two radio programs were prepared by young volunteers.Five training sessions were organised for volunteers involved in the program, developing their photography and journalistic skills in order to enable them to more effectively disseminate information about ARCS activities.

The program will be finalized with a social campaign using the slogan "They are waiting for us…", during which the implementation of large-scale awareness and resource mobilization events will promote awareness about ARCS activities and the implementation of programs supporting lonely elderly people.

From November 2009 the ARCS, with the support of the IFRC, implements "Peer Support Project" with the Bulgarian Red Cross which will be finished in January, 2010. The aim of the program is to establish an effective exchange of knowledge and experience between the two national Societies (NS) in the areas of fundraising and development of regional branches. The exchange visits and discussions promoted the sharing of best experience between the two NS's, and the development of a package of strategic documents. The suggestions made by the Bulgarian Red Cross also contributed to the improvement of the NS resource mobilisation work plan by providing a more systematic approach to fundraising at both national and local level.







ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ / հատված

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայկական Կարմիր Խաչի Ընկերության ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ՀՀ Հաշվապահական հաշվառման մասին օրենքի, Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների, Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման սկզբունքների և այլ իրավական ակտերի:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ

| | |
|---|---|
| Աուդիտի ղեկավար՝ | Գ. Ալեքսանյան |
| Տնօրեն՝ | Տ. Զորյան |

**INDEPENDENT AUDITOR'S REPORT**

In our opinion, the financial statements give a true and fair view of the financial position of the Armenian Red Cross Society as of December 31, 2009 and of its financial performance and its cash flow for the year then ended in accordance with Accounting Laws of RA, International Financial Report Standards (IFRS) as well as principles for preparation and presentation of financial statements adopted by the Council of International Accounting Standards and other regulatory acts.

**London Business Group JV LLC**

| | |
|---|---|
| Head of audit | G. Aleksanyan |
| Director | T. Zoryan |

## ՀԿԽԸ ֆինանսական գործունեություն

| Եկամուտ | Հազար ՀՀ Դրամ | 1 ԱՄՆ $=377,89 |
|---|---|---|
| Եկամուտ ճանաչված շնորհներ | 278525 | 737053.1 |
| Անդամավճար | 1685 | 4459 |
| Ծառայություն | 10103 | 26735.3 |
| Այլ | 1572 | 4160 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **291885** | **772407.4** |

| Ծախսեր | Հազար ՀՀ Դրամ | 1 ԱՄՆ $=377,89 |
|---|---|---|
| Ծրագրային ծախսեր | 280760 | 742967.5 |
| Ծառայությունների մատուցման հետ կապված ծախսեր | 9217 | 24390.7 |
| Այլ | 544 | 1439.6 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **290521** | **768797.8** |

## Financial Activities of ARCS

| Income | In 1000 AMD | 1 USD $=377,89 |
|---|---|---|
| Received from donations | 278525 | 737053.1 |
| Membership fees | 1685 | 4459 |
| Services | 10103 | 26735.3 |
| Other | 1572 | 4160 |
| **TOTAL** | **291885** | **772407.4** |

| Expenses | In 1000 AMD | 1 USD $=377,89 |
|---|---|---|
| Expenses related to the implementation of projects | 280760 | 742967.5 |
| Expenses related to provision of services | 9217 | 24390.7 |
| Other | 544 | 1439.6 |
| **TOTAL** | **290521** | **768797.8** |

ICRC

Տարեկան զեկույցը պատրաստվել և հրատարակվել է Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

The Annual Report was developed and published by the Armenian Red Cross Society with the financial support of the International Committe of Red Cross

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society

ՀՀ, ք. Երևան, 0015, Պարոնյան 21
Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Կենտրոնական գրասենյակ
Հեռ.՝ (+374 10) 58 36 30
Ֆաքս՝ (+374 10) 53 84 91
Էլ. փոստ՝ redcross@redcross.am
Ինտ. կայք՝ www.redcross.am

Armenian Red Cross Society
National Headquarters
Address: 21 Paronyan Str., Yerevan, Armenia, 0015
Phone: (+374 10) 58 36 30
Fax: (+374 10) 53 84 91
E-mail: redcross@redcross.am
Web. site: www.redcross.am